Ազգ
Azg
23 ՕԳՈՍՏՈՍ 2013 ՈՒՐԲԱԹ 138(5221)
ISSN: 1829-1651

# Հակառակորդը կատարված փաստի առջեւ է

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը նամակ է ուղարկել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունին: Նամակի բովանդակությունն ինքնին հետաքրքրական չէր լինի, եթե չհրապարակվեր ՌԴ նախագահ Պուտինի՝ Բաքու կատարած աշխատանքային այցից հետո, եւ եթե այնտեղ գործածված չլիներ մի նոր եզրույթ:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին Մամեդյարովը նամակ է գրել ոչ թե Պուտինի այցից հետո, այլ հուլիսի 19-ին դեռեւս, սակայն նամակի բովանդակությունը հրապարակվում է այժմ:

Նամակում Ադրբեջանի ԱԳ նախարարը բնութագրում է Հայաստանի քաղաքականությունը ԼՂ հակամարտության հարցում: Այն, ըստ Էլմար Մամեդյարովի, fait accompli է (կատարված փաստի առջեւ դնել): «Հայաստանը փորձում է փոխել օկուպացված տարածքների ազգագրական, սոցիալ-մշակութային բնույթը՝ կառուցելով նոր բնակելի տներ, վերակառուցելով օդանավակայանը, տարբեր ավտոճանապարհներ եւ այլն...», գրել է Մամեդյարովը՝ Բան Կի Մունին: Ադրբեջանի ԱԳ նախարարը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացրել է նաեւ, թե ինչպես է «Հայաստանը Սիրիայից ներգաղթած հայերով բնակեցնում օկուպացված տարածքները»:

Դատելով հանգամանքից, որ նամակը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հասցեագրվել է ավելի քան մեկ ամիս առաջ եւ այս ամբողջ ժամանակահատվածում մնացել է անպատասխան, ուրեմն Բան Կի Մունը անհրաժեշտություն չի տեսել պատասխանելու Մամեդյարովի նամակին, գոնե տեղեկացնելու, որ այն ընդունվել է որպես «ի գիտություն»: Առհասարակ այս նամակում ամենաուշագրավը ոչ թե դրա՝ բոլորին արդեն ձանձրացրած տեքստն է, այլ «թողարկման ժամկետը», ինչպես նաեւ դրանում գործածված եւ Հայաստանի քաղաքականությունը բնորոշող նոր եզրույթը: Բաքվում Պուտինը ընդգծեց, որ «Ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի բացառապես քաղաքական ճանապարհով...»: Ընդամենը օրեր անց Մամեդյարովը հրապարակայնացրեց իր նամակը՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որտեղ գրված է. «Քանի որ քաղաքական միջոցներով Հայաստանի հետ բանակցություններ անցկացնելու ջանքերն արդյունք չեն տալիս, ստատուս քվոյի հետագա շարունակումը կարող է անկանխատեսելի հետեւանքներ ունենալ, ինչի ողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի վրա»: Փաստորեն, չնայած Բաքվում Ռուսաստանի նախագահը Բաքվին ասում է, որ «ԼՂ հակամարտությունը պետք է լուծել բացառապես քաղաքական ճանապարհով», Բաքուն ավելի ուշ հայտարարում է, թե «Հայաստանի հետ քաղաքական միջոցներով բանակցություններ անցկացնելու ջանքերը արդյունք չեն տալիս...», եւ ուղղակիորեն սպառնում է պատերազմով, դրա ողջ պատասխանատվությունը կանխավ բարդելով Հայաստանի վրա:

Էլմար Մամեդյարովը փորձառու դիվանագետ է եւ հրաշալիորեն հասկանում է, որ ՄԱԿ-ն ու իր գլխավոր քարտուղարությունը վաղուց արդեն այն կառույցն ու օղակը չեն, որ կարող են ինչ-որ գործուն միջամտություն ունենալ միջազգային այնպիսի նուրբ հակամարտությունում, ինչպիսին, օրինակ, ղարաբաղյանն է: Փաստորեն, Մամեդյարովը հասկանում է, որ իր նամակը՝ Կի Մունին, «Հայաստանի հետ քաղաքական միջոցներով բանակցություններ անցկացնելու ջանքերի պես» որեւէ արդյունք չի տալու, գիտի ու գրում է:

Տես էջ 2

# Անկախ երկրի քաղաքացի լինելու զգացողություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




23 տարի առաջ այս օրը, երբ Հայաստանում ընդունում էին Անկախության հռչակագիրը, հազիվ թե կարողանային պատկերացնել հետագա 23 տարիների վայրիվերումները, դժվարությունները, հուսահատություններն ու հուսավառությունները: Սակայն գիտակցողների համար անանց արժեք անկախությունն այն ժամանակ բարեբախտաբար ճանապարհ ընկավ ու ենթադրեց նաեւ, որ անկախ պետությունում գլխավոր արժեքը, պետության մյուս ատրիբուտներին հավասար, նաեւ մարդն է, քաղաքացին, ու նախ՝ քաղաքացին: Գիտակցողները իսկապես ուրախանում էին «Հայաստանի Հանրապետություն» անվանված երկրի զգացողությունից, որի անունից դուրս մնացին խորհրդային բաղադրիչները, ու, անկախ դիմադրողներից ու անկախության հանդեպ չկամորեն տրամադրվածներից, երկրագնդի քարտեզը համալրվեց այլեւս մեր փոքրիկ, բայց անկախ երկրի նոր գույնով: Անկախ նրանից՝ մեր քաղաքացին գիտակցո՞ւմ է անկախության արժեքը, իր՝ անկախ պետության քաղաքացի լինելու արժեը, թե ոչ: Գիտակից քաղաքացին, այո, այսօր շատ կարեւոր բաղադրիչ է անկախ պետության համար, անկախ այն հանգամանքից, որ անհանգստություն է պատճառում իշխանությանը: Սակայն որեւէ պետություն, ինչու չէ՝ նաեւ իշխանություն, պետք է հարուստ զգա իրեն, եթե իսկական քաղաքացին երկրում վարկ ունի, խնդիր է լուծում, իշխանատենչին ու կոռումպացվածին իր տեղն է ցույց տալիս: «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ:

Տես էջ 2

# Կաթողիկոսը դիմել է Ալլահշուքյուր Փաշազադեին

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ադրբեջանի տարածքում գերեվարված ՀՀ քաղաքացի, 22-ամյա շարքային զինծառայող Հակոբ Ինջիղուլյանի խնդրով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն դիմել է Ադրբեջանի հոգեւոր առաջնորդ, Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեին՝ քայլեր ձեռնարկելու հայ զինվորի ազատ արձակման եւ հայրենիք վերադարձնելու համար: Մայր աթոռից «**Ազգ**»-ին տեղեկացրին, որ Վեհափառը հայ գերուն օժանդակելու հարցում խնդրել է նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա-ի միջնորդությունը Ադրբեջանի իշխանությունների հետ բանակցություններ սկսելու վերաբերյալ:

«Հայ ռազմագերու խնդիրը արտաքին գործերի նախարարության ուշադրության կենտրոնում է», երեկ հավաստիացրել է ՀՀ արտաքին գործերի փոխնախարար **Շավարշ Քոչարյանը**՝ հավելելով, որ ամեն բան արվում է, որպեսզի գերեվարված հայ զինվորը վերադառնա հայրենիք: «Բոլոր մակարդակներով, բոլոր ուղղություններով հնարավորինս ամեն ինչ արվել է, և՛ զանգեր, և՛ հանդիպումներ, եւ հեղինակը ոչ միայն արտգործնախարարությունն է, այլեւ բոլոր այն կառույցները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են այդ հարցին», ասել է նա:

# Սպասվում են մագնիսական փոթորիկներ

**SDO եւ SOHO արեգակնային դիտարանները Արեգակի վրա արձանագրել են պսակածեւ արտանետում: Ինչպես տեղեկացնում է NASA-ն, վայրկյանում 917 կմ արագությամբ դեպի Երկիր շարժվող պլազմայի վիթխարի ամպը առաջիկա օրերին կհասնի մեր մոլորակին եւ կառաջացնի մագնիսական փոթորիկներ:**

**ՌԴ ԳԱ Լեբեդեւի անվան ֆիզիկայի ինստիտուտի Արեգակի ռենտգենային աստղագիտության լաբորատորիայի աշխատակից Սերգեյ Բոգաչովի խոսքերով՝ սպասվում է, որ մագնիսական փոթորիկների Kp ցուցիչը կհասնի 6-7 մակարդակի (5-ից բարձրը համարվում է մագնիսական փոթորիկ): Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:**

**Բոգաչովը նշում է, որ նման կարգի մագնիսական փոթորիկը ոչ մի կերպ չի ազդի տեխնիկայի աշխատանքի վրա. հնարավոր են ռադիոկապի ընդհատումներ միայն բեւեռային շրջաններում:**

# Կբաշխվի աշնանացան ցորենի սերմացուն

**Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու պետությունից ստանալու նպատակով հուլիսի 12-ի դրությամբ յոթ մարզից ստացվել է 147 նախնական ցանկ-հայտ: 2013-ի աշնանացանի համար կբաշխվի 3400 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու: Այդ մասին երեկ որոշում ընդունեց կառավարությունը:**

**Նիստում հաստատվեց նաեւ հողօգտագործողներին 2013-ի աշնան գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գնով ազոտական պարարտանյութի ձեռքբերման պետական աջակցության ծրագիրը: Այդ նպատակով հատկացվեց ավելի քան 380 մլն դրամ: Այդ գումարով Հայաստան կներկրվի 8 հազար 310 տոննա ամոնիակային սելիտրա, որի 1 պարկը (50 կգ) 6 հազար դրամով կվաճառվի հողօգտագործողներին: Փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը տեղեկացրեց, որ իրագործվելու է նաեւ գյուղացիներին դիզվառելիքի տրամադրման պետական աջակցության ծրագիրը:**

# Երեք նոր տառեր մեքենաների համարանիշներում

**Կառավարության որոշմամբ տրանսպորտային միջոցների համարանիշներում, բացի ներկայումս գործածվող A, D, L, M, N, O, P, Q, R, S, T, U եւ V տառերից, կարող են օգտագործվել նաեւ C, F, Z տառերը: Մեկ այլ որոշմամբ նոր գներ են սահմանվել մեծ պահանջարկ ունեցող համարանիշների հատկացման համար: Դրանց ձեռքբերման համար սահմանված 60000, 120000, 240000, 600000, 1200000 եւ 5000000 դրամ հաստատագրված վճարների փոխարեն սահմանվում են նոր հաստատագրված վճարներ՝ 60000, 150000, 250000, 400000, 600000, 1500000, 3000000 եւ 8000000 դրամ չափերով:**

Ա. Մ.

# Պաշտպանության նախարարը՝ առաջին գծում



Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն երկօրյա շրջայց է կատարել երկրի հյուսիսարեւելյան սահմանագոտում, այցելել զորամասեր, ծանոթացել է շինարարական աշխատանքներին, եղել է զորանոցներում: Պաշտպանական գերատեսչության ղեկավարը ծանոթացել է նաեւ զորամասերում գործող զինվորական ճաշարանների շենքային եւ սանիտարահիգիենիկ պայմաններին, նախաճաշել է զինվորների հետ:

«Երբ այցելում եմ առաջնային գիծ, ինձ համար տարբերություն չկա, ես աջակցում, խրախուսում եմ և՛ առաջնագծում կանգնած զինվորին, և՛ առաջնագծի խաղաղ բնակչությանը, որոնք, ըստ էության, մեր երկրի զինվորներն են եւ ամեն պահի կանգնած են զինվորի կողքին, իսկ զինվորը կանգնած է նրանց կողքին», զինվորների հետ հանդիպմանն ասել է նախարարը՝ նշելով, որ վերջին տարիներին մի շարք զորամիավորումներում նվազել են դժբախտ պատահարները, կանոնակարգվել են միջանձնային հարաբերությունները:

Նախարարը մարտական հենակետերում ստուգել է պաշտպանական եւ ինժեներական կառույցների հուսալիությունը, ծանոթացել զինծառայողների մարտական պատրաստությանը, բարոյահոգեբանական վիճակին, հետաքրքրվել զինվորների առօրյայով, կենցաղային պայմաններով:

Հ. Հ.

# Ալեքսանդր Իսկանդարյան. Ասոցիացման համաձայնագիրը Սանտա Կլաուսը չէ



«Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Բաքու Հայաստանի հետ այնքանով կապ ուներ, որքանով հայ ԶԼՄ-ները ու վերլուծաբանները լուսաբանեցին եւ անդրադարձան: Այցը Հայաստանի հետ ոչ մի կապ չուներ, զուտ աշխատանքային էր եւ պարունակում էր մի քանի բաղադրիչներ: Բացի տնտեսական, էներգետիկ հարցեր քննարկելուց` այս այցը շատ կարեւոր էր նաեւ երկու երկրների սառած հարաբերությունները կարգավորելու համար»: Տեսակետը «Կովկաս» ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ **Ալեքսանդր Իսկանդարյանինն** է: Նրա խոսքերով` իրեն ու ամբողջ աշխարհին Ադրբեջանի հետ կապված այլ հարց է հետաքրքրում. Երրորդ անգամ ընտրվելիս Ալիեւը որքա՞ն ձայն կհավաքի. կաշխատի՞ սովորական ադրբեջանական ռեֆլեքսն, ու Ալիեւը 120 տոկոս ձայն կստանա, թե՞ մի քիչ պակաս: Մինչ ընտրությունները Բաքու այցելելով Պուտինը հասկացրեց, որ Ալիեւի թեկնածությունն է պաշտպանում:

Վերջերս նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությանը, թե Ալիեւի հաղթանակն ընտրություններում ամենաձեռնտուն է Հայաստանի համար, ըստ Իսկանդարյանի, ուղղված էր միջազգային հանրությանը: «Դժվար թե Ալիեւին հաճելի լինի, որ իրեն աջակցում է այնպիսի ոխերիմ թշնամի, ինչպիսին Սերժ Սարգսյանն է: Սրանով Սարգսյանը միջազգային հանրությանն ազդանշան ուղարկեց, որ Ադրբեջանում մեզ պետք է կայունություն, եւ Ադրբեջանում տիրող իրավիճակը միանգամայն ձեռնտու է Հայաստանին»:

Անդրադառնալով նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք գագաթաժողովին, որտեղ նախատեսվում է, որ Հայաստանը կնախաստորագրի Ասոցիացման համաձայնագիրը, Իսկանդարյանը խորհուրդ է տալիս չընկնել չափազանցությունների գիրկն ու չհավատալ, որ Վիլնյուսից հետո Հայաստանում ապրելու ենք ինչպես Շվեյցարիայում: «Եթե ֆորսմաժորային որեւէ իրավիճակ չեղավ, ապա Հայաստանը կնախաստորագրի այդ պայմանագիրը, սակայն պետք է հասկանալ, որ սա երկարամյա գործընթացի մի քայլն է: Ասոցիացման համաձայնագիրը Սանտա Կլաուսը չէ, եւ պետք չէ կարծել, որ պայմանագրի նախաստորագրումից հետո Հայաստանի խնդիրները կվերանան: Կկատարվեն ներդրումներ, մարդիկ օրենք չեն խախտի, կցանկանան աշխատել, ու Հայաստանում որեւէ խնդիր չի լինի: Իհարկե կլինեն փոփոխություններ, բայց ոչ միանգամից: Սա ընդամենը մեկ քայլ է, սա ոչ թե ճանապարհի վերջն է, այլ` մեջտեղը»:

Իսկանդարյանի մեկնաբանությամբ` դեռ վաղ է խոսել, թե ում միջեւ Երեւանը պետք է ընտրություն կատարի` Եվրոմիությո՞ւն, թե՞ Եվրասիական:

«Մենք դեռ որեւէ կազմում չենք ընդգրկվում, մենք ընդամենը պայմանագիր ենք նախաստորագրում: Համոզված եմ, որ Երեւանը տեղյակ է պահում Մոսկվային Հայաստան-Եվրոմիություն հարաբերությունների առաջընթացի վերաբերյալ, նաեւ տեղյակ է պահում Եվրոմիությանը Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների վերաբերյալ»: Հ. Հ.

# Միայն հուլիսին 2,1 տոկոս տնտեսական ակտիվության աճ

### *Իսկ այս տարվա յոթ ամիսներին` 4 տոկոս*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2013-ի հունվար-հուլիս ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն` Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4 տոկոսով: Հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ տնտեսական ակտիվության աճը կազմել է 2,1 տոկոս, իսկ այս տարվա հունիսի նկատմամբ` 12,7 տոկոս: Նախ` ի՞նչ ցուցանիշներն են արձանագրվել մեր տնտեսության ճյուղերում հունվար-հուլիսին:

Արդյունաբերությունում արձանագրվել է 6,7 տոկոս աճ, գյուղատնտեսությունում` 4,7 տոկոս, ծառայությունների ոլորտում` 3,8 տոկոս, առեւտրի շրջանառությունում` 3 տոկոս աճ, շինարարությունում արձանագրվել է 8,6 տոկոս անկում:

Թեեւ աճի ամենաբարձր ցուցանիշը շարունակում է արդյունաբերությունում պահպանվել, բայց այստեղ հուլիսին նախորդ տարվա հուլիսի նկատմամբ արձանագրվել է 1,5 տոկոս անկում, իսկ նախորդ ամսվա` հունիսի նկատմամբ` 7 տոկոս անկում: Գյուղատնտեսությունում հուլիսին 10,9 տոկոս աճ է գրանցվել անցյալ տարվա հուլիսի եւ 114,7 տոկոս աճ` նախորդ ամսվա` հունիսի նկատմամբ: Բնական է, որ վերջին ցուցանիշը պայմանավորված է սեզոնային գործոնով:

Առեւտրում այս տարվա հուլիսին նախորդ տարվա հուլիսի համեմատ իրավիճակն անփոփոխ է, իսկ այս տարվա հունիսի նկատմամբ արձանագրվել է 5,2 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում հուլիսին չնչին` 0,7 տոկոս աճ է արձանագրվել, իսկ այս տարվա հունիսի նկատմամբ` 1,6 տոկոս անկում: Շինարարությունում անցյալ տարվա հուլիսի նկատմամբ արձանագրվել է 8,1 տոկոս անկում, այս տարվա հունիսի նկատմամբ` 3,7 տոկոս անկում:

Արտաքին առեւտրաշրջանառությունը 2013-ի առաջին 7 ամիսներին 2012-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 3,4 տոկոսով եւ կազմել մոտ 3 մլրդ 190 մլն դոլար: Արտահանումը կազմել է 825 մլն դոլար, արձանագրելով 9,4 տոկոս աճ, ներմուծումը կազմել է 2 մլրդ 364 մլն դոլար, աճելով 1,4 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը այս տարվա հունվար-հուլիսին կազմել է 1 մլրդ 539 մլն դոլար:

Միայն հուլիս ամսին արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 13,1 տոկոսով եւ կազմել 492 մլն դոլար: Արտահանումը կազմել է 124,5 մլն դոլար, ավելանալով 5,7 տոկոսով, ներմուծումը կազմել է 368 մլն դոլար, աճելով 15,8 տոկոսով:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-հուլիսին կազմել է մոտ 155 հազար դրամ, մասնավոր հատվածում` 186 հազար դրամ, պետականում` 127 հազար դրամ:

Այսպիսով, հուլիսին տնտեսական ակտիվությունը Հայաստանում շարունակել է աճել, բայց ոչ մեծ տեմպերով, իսկ 7 ամսվա կտրվածքով աճի տեմպը նվազել է:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ*

# Սյունիքի թիվ 38-ում կպայքարի 3 թեկնածու

**Սյունիքի մարզի թիվ 38 ընտրատարածքում, որտեղ սեպտեմբերի 29-ին մեծամասնական կարգով լրացուցիչ ընտրություններ են կայանալու (Սյունիքի մարզպետ նշանակված Վահե Հակոբյանի թափուր մնացած մանդատի համար), ընտրագրավի համար տրամադրված լրացուցիչ ժամկետի ավարտից հետո նախապես առաջադրված 5 թեկնածուներից պայքարի մեջ մնացին 3-ը` ՀՀԿ-ն ներկայացնող Արմեն Կարապետյանը, «Ժառանգությունից» Սամվել Հայրապետյանը («Ժառանգության» տարածքային բաժնի համակարգող) եւ կապանցի Վահրամ Հովհաննիսյանը: Թեկնածուների գրանցման վերջնաժամկետը օգոստոսի 25-ն է:**

# Հակառակորդը կատարված փաստի առջեւ է

*1-ին էջից*

**Հետեւաբար, Մամեդյարովին (Բաքվին) անհրաժեշտ է ոչ թե ՄԱԿ-ի գործուն միջամտությունը հակամարտությունում, այլ հերթական անգամ բարձրաձայնել, որ ԼՂ հակամարտությունում Հայաստանին պետք է պատժել, քանի որ Երեւանը վարում է fait accompli-ի քաղաքականություն: Հենց այս ֆրանսերեն եզրույթի բանեցումն իր քաղաքական-դիվանագիտական բառապաշարում նորույթ է Բաքվի համար: Ադրբեջանը լավ հասկանում է, որ ժամանակի ընթացքում ինքը ավելի է հեռանում Ղարաբաղից, այնտեղ ապրող բնակչությունից եւ այնտեղ կառուցվող ու վերակառուցվող բնակելի տներից, օդանավակայանից ու ավտոճանապարհներից: Չի բացառվում, որ Բաքուն առաջին անգամ բարձրաձայն խոսելով հայկական fait accompli-ի մասին, հեռահար նպատակ ունի արդյունքում ցույց տալ սեփական ժողովրդին, որ Ղարաբաղի հետ իրենք այլեւս կապ չունեն, որ իրենք ամեն ինչ արեցին, որ «այդպես չլինի», անգամ «ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին նամակ գրեցինք», բայց...**

**Մամեդյարովը այս ամենն իհարկե հասկանում է եւ դրա համար էլ նամակ է գրում` ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ավելի ճիշտ` դրա համար էլ նա մեկ ամիս անց հրապարակայնացնում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին հղած նամակն այն մասին, որ Բաքուն կատարված փաստի առջեւ է:**

# Անկախ երկրի քաղաքացի լինելու զգացողություն

*1-ին էջից*

**Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը եւ օրենքները». Անկախության հռչակագրի այս խոսքերից ամեն մեկը ոսկեհատիկ է, որը, սակայն, այսօր մի տեսակ լիարժեք չի գիտակցվում ամենատարբեր պատճառներով, իսկ Սահմանադրությունն ու օրենքներն էլ հաճախ շրջանցվում են: Բայց դա առանձին խոսակցություն է, եւ ո՞ւմ մտքով այսօր կարող է անցնել, որ հանկարծ ու կարող էինք անկախ չլինել: Անկախությունն այլեւս կյանքի անբաժան մասն է, կենսաձեւ` դժվար լինի, թե հեշտ: Անկախ նրանից, որ այս 23 տարում շատ բան արժեզրկվեց, շատ բան իր նախնական արժեքին լրիվ հակառակ իմաստը ստացավ` Հայաստանի Հանրապետություն անկախ պետությունն այն միակ արժեքն է, որը հավասարապես վերաբերում է պաշտոնյային եւ գյուղացուն, մտավորականին եւ փողոցն ավլողին: Այս գերարժեքի գիտակցումն ունեն նաեւ երկրից հեռու հայերը, օրվա հացն ուրիշ երկրներում վաստակողները, հայացքն ուղղած քարտեզի մեր բաժին լուսավոր կետին, որ միշտ տուն է կանչում: Սակայն անկախությունը նաեւ պատասխանատվություն է` երկրի, նրա մարդկանց, նրա վարկի ու արժանապատվության համար, աշխատանք ու ջանք, հաճախ` գերմարդկային: Ոստիկանի ու իշխանավորի, հողի մշակի, մտավորականի ու ընդհանրապես` բոլոր հայերի:**

**Ասենք` նախորդ օրը Կոմիտասի 5 հասցեում ունեի՞ն ոստիկանն ու բողոքողները անկախ երկրի զգացողությունը` սա մտորելու նյութ է, որովհետեւ Հայաստանի Հանրապետության անունից չի կարելի սեփական քաղաքացիներին հրել, նվաստացնել եւ ծեծել, ինչպես, ի դեպ, եւ «մլիցա» անվանել ոստիկանին: Կամ կառուցապատողը իր շահը պաշտպանելիս Հայաստանի Հանրապետությունն իր սեփականությո՞ւնն է համարում միայն, թե՞ նաեւ մյուս բնակիչներինը: Կամ բողոքողներից Անուշավան Պետրոսյանին ծեծի ենթարկած անձինք ո՞ւմ անունից էին ծեծի ենթարկում նրան` իրե՞նց, թե Հայաստանի Հանրապետության: Կամ նրանք, ովքեր իրենց գործողություններն անվանում են ներպետական ազատագրական պայքար, ի՞նչ նկատի ունեն, Հայաստանի Հանրապետությո՞ւնը, իշխանությո՞ւնը, բայց համաձա՞յն են, որ նույն կերպ իրենց դեմ պայքարեն, երբ իրենք իշխանություն լինեն:**

**Ամեն դեպքում եւ անկախ պատճառներից ու շարժառիթներից` Հայաստանի քաղաքացին ինչ եւ ինչպես էլ անի, պիտի հիշի անկախ երկրին իր պատկանելությունը, այս դեպքում գուցե նրա գործողությունները մի քիչ այլ հունով ընթանան:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կանխել հոգեկան հիվանդությունները

Ինչպես որեւէ հիվանդության, այնպես էլ հոգեկան հիվանդության կանխարգելումն ավելի հեշտ է, քան բուժումը: Սակայն Հայաստանում հոգեկան եւ այլ տեսակի հիվանդությունների կանխարգելման ծրագրերին ուղղվող ֆինանսավորում գտնելը շատ դժվար է: Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր **Քրիստինա Հովենը** նշում է, որ մարդիկ ավելի հակված են իրենց ֆինանսավորումն ուղղելու արդեն առկա կոնկրետ խնդիրների լուծմանը, քան կանխարգելման ծրագրերին, մինչդեռ կանխարգելման շնորհիվ հասարակությունը հետագայում կլինի ավելի առողջ:



Քրիստինա Հովենը կարծում է, որ հոգեկան առողջությանն ուղղված աշխատանքը պետք է սկսել դեռեւս դպրոցներից, որտեղ աշխատող մանկավարժները պետք է ունենան հոգեկան առողջության մասին գոնե նվազագույն գիտելիքներ: Ոչ միայն ծնողները, այլեւ ուսուցիչները պետք է կարողանան սովորեցնել երեխաներին, որպեսզի վերջիններս պատմեն, արտահայտեն իրենց անհանգստությունները: Մարդու հոգեկան առողջությունը կախված է մանկության ու դեռահասության տարիքում ստացած դաստիարակությունից: Նույնիսկ կան հոգեբաններ, որոնց կարծիքով հոգեկան առողջության խնդիրները թաքնված են կյանքի մինչեւ երեք տարեկանն ընկած շրջանում:

Քրիստինա Հովենը զուգահեռ է անցկացնում ծխախոտի վաճառքի քաղաքականության հետ՝ զարմանքով նշելով, որ Հայաստանում ծխախոտը շատ էժան է ու հասանելի, ըստ նրա՝ այստեղ ստեղծել են նպաստավոր բոլոր պայմանները, որպեսզի երիտասարդները ծխեն: Քրիստինա Հովենը հավելում է՝ այլ երկրներում ծխախոտը շատ թանկ արժե, Հայաստանում էլ կառավարությունը պետք է կանխի ծխախոտի հեշտ հասանելիությունը՝ կանխելու համար ծխախոտի պատճառած հետագա բարդությունները՝ ընդհուպ քաղցկեղի առաջացումը: Հոգեկան առողջության դեպքում էլ կանխարգելմամբ կխուսափեն հոգեկան հիվանդություններից:

Երեկ «Հայացք» ակումբում մյուս բանախոսը՝ Երեւանի բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ **Խաչատուր Գասպարյանը** ընդգծեց, որ հոգեկան առողջության մասին ինֆորմացիան փոխանցելիս լրատվամիջոցները պետք է զգույշ լինեն, քանի որ սխալ կերպով փոխանցված ինֆորմացիան կարող է թեկուզ մի մարդու դեպքում հասցնել անցանկալի արդյունքի: Հատկապես ինքնասպանությունների մասին լուրերը փոխանցելիս լրատվամիջոցները չպետք է այդ մասին գրեն հենց առաջին էջերում կամ հաղորդեն որպես գլխավոր լրատվություն: Օրինակ՝ եթե որեւէ մեկի հոգեկան առողջությունը բարելավվում է կամ մեկն ու մեկը բուժվում է, ապա լրատվամիջոցները դրան չեն անդրադառնում, բայց ինքնասպանության մասին կգրեն: Խաչատուր Գասպարյանը հայտնում է իր անհանգստությունը, որ հեռուստատեսությամբ չափից դուրս շատ է բացասական ինֆորմացիան, որն ամենեւին հրատապ չէ մեր հասարակության համար: Վերջին տարիներին լրատվամիջոցներում ինքնասպանությունների մասին լրատվությունը ավելացել է, ու ոչ միայն տեղեկատվությունը, իրականում ինքնասպանությունները եւս ավելացել են:

Խաչատուր Գասպարյանը առանձնացնում է ինքնասպանության հանգեցնող պատճառային երեք խմբեր՝ կապված հոգեկան ծանր պաթոլոգիաների, իրավիճակային խնդիրների ու սոցիալ-տնտեսական պայմանների հետ: Նա ավելացնում է՝ հետազոտությունը ցույց է տվել, որ հայերի մեջ կպչուն ու սեւեռուն խանգարումներն ավելի տարածված են, քան ուրիշ ազգերի մեջ:

Ասուլիսի ժամանակ նաեւ տեղեկացվեց, որ առաջիկայում կայանալու է գիտաժողով հոգեկան առողջության թեմայով: Սա լինելու է Համաշխարհային հոգեբուժական ասոցիացիայի գիտաժողովը, որին մասնակցելու են մասնագետներ աշխարհի տարբեր երկրներից: «Հոգեկան առողջություն եւ հոգեկան խանգարում. կիզակետնորոնում Եվրասիան է» թեմայով գիտաժողովը կանցկացվի օգոստոսի 29-31-ը: Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ **Արմեն Սողոյանը** նշում է, որ գիտաժողովը կազմակերպվում է հայկական կողմի նախաձեռնությամբ, եւ ներկայացուցչական նման կազմ Հայաստանում առաջին անգամ է հավաքվում:

# ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանին Կրթության եւ գիտության նախարար Ա. Աշոտյանին

Երկու տարի առաջ մենք, նաեւ մասնագետներ ԱՄՆ-ից եւ Ռուսաստանից, Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցների խնդրանքով, հայտնել էինք մեր խիստ բացասական կարծիքը աստղադիտարանի տնօրեն Հ. Հարությունյանի հակագիտական դոկտորական ատենախոսության վերաբերյալ: Ի վերջո, ատենախոսության պաշտպանությունը կասեցվեց:

Վերջերս Հարությունյանը մամուլում հայտարարել է, որ աստղադիտարանում բացում է ռելյատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոն (հավանաբար տիեզերական աղբի հետազոտմանը զուգահեռ) այն դեպքում, որ աստղադիտարանում կամ ԳԱԱ-ում չկա գեթ մեկ մասնագետ այդ բնագավառից:

Կենտրոնի բացումը ԳԱԱ-ի հիմնարկում, որտեղ տեղեկություն չունեն հարաբերականության տեսությունից, սեւ խոռոչներից, ռելյատիվիստական կոսմոլոգիայից, իր անհեթեթությամբ ծիծաղ է առաջացրել արտասահմանի մեր գործընկերների մոտ, այն կվարկաբեկի աստղադիտարանի, հայկական գիտության անունը:

Սա դարձյալ ցույց է տալիս գիտության կազմակերպման բացթողումները երկրում:

ՎԱՀԱԳՆ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ, պրոֆեսոր
ՍԵՐԳԵՅ ՄԱՏԻՆՅԱՆ, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս
ԱՐԱ ՍԵԴՐԱԿՅԱՆ, պրոֆեսոր
Ա. Ալիխանյանի անվ. ազգային լաբորատորիա

# Արա Սահակյանը՝ դեսպան Ղազախստանում



Նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Վասիլի Ղազարյանին Ղազախստանի Հանրապետությունում եւ, համատեղության կարգով, Ղրղզստանի Հանրապետությունում եւ Աֆղանստանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից ազատելու մասին:

Հանրապետության նախագահի մեկ այլ հրամանագրով Արա Սահակյանը նշանակվել է Ղազախստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան (նստավայրը՝ Աստանա):

ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# Լոնդոնի Թահթայան կիրակնօրյա վարժարանը 35 տարեկան է

*Օգտվելով առիթից, որ Լոնդոնի Գեւորգ Թահթայան կիրակնօրյա ազգային վարժարանի նախկին երկարամյա տնօրենուհի տիկին **Անահիտ Ղազարյանը** Երեւանում է, «Ազգի» ամառային արձակուրդի օրերին հանդիպեցինք նրա հետ եւ քաղեցինք հետեւյալ տեղեկությունները:*

**Լոնդոնահայերի կյանքում նշանակալի թվական է 1978-ի փետրվարի 18-ը, քանի որ այդ օրը, բարերարությամբ արժանահիշատակ Գեւորգ Թահթայի, հիմք է դրվել Լոնդոնի Գեւորգ Թահթայան կիրակնօրյա ազգային վարժարանի: Դրանից ամիսներ առաջ Հարություն Այվազյանի ատենապետությամբ ստեղծվել էր Համայնքային եւ եկեղեցական խորհրդի մշակութային հանձնախումբը, որն իրականացնելու էր վարժարանի ապագա գործունեությունը:**



**Վարժարանը կոչվել է ծննդով կեսարացի Գեւորգ Թահթայի (Թահթաբրունյան) անունով՝ ի պատիվ նրա առատաձեռն նվիրատվության եւ անմնացորդ նվիրվածության՝ կրթության ասպարեզին: Սովորել է ճարտարագիտություն Ստամբուլում: Առաջին համաշխարհայինի օրերին երրորդ կուրսի փոխադրված ուսանողը կեղծ փաստաթղթերով տարբեր աշխատանքներ է կատարել Ստամբուլում եւ շրջակայքում: Ձերբակալվել է շատ անգամներ, բայց նրան եւ իր ընտանիքին (բացի ամուսնացած մի քրոջից, որն աքսորվել է) հաջողվել է խուսափել կոտորածներից: 1924-ին տեղափոխվել է Մանչեստր (Անգլիա):**

**Մշտական շենք չունենալու հանգամանքը դժվարություններ է հարուցել: Սկզբնական շրջանում դասավանդությունները տեղի են ունեցել Ս. Պետրոս եկեղեցու կից սրահներում, իսկ 1979-ից՝ արեւմտյան Լոնդոնի հայաշատ Իլինգ թաղամասի մոտ գտնվող անգլիական միջնակարգ դպրոցի շենքում:**

**Աշակերտների թիվը 150-200-ի սահմաններում է: Նրանք արեւելահայերեն եւ արեւմտահայերեն են սովորում, ըստ իրենց նախնական պատրաստվածության, հետեւյալ դասարաններում. 3-5 տարեկանները՝ մանկապարտեզում, 5-7 տարեկանները՝ նախապատրաստական, իսկ 7-14 տարեկանները՝ առաջինից իններորդ դասարաններում: Վերջին՝ իններորդ դասարանն ավարտելիս նրանք հանձնում են հայոց լեզվի պետական քննություն՝ GCE O level (ընդհանուր կրթական վկայական, սովորական մակարդակ): Դասաժամերի ընդհանուր տեւողությունը երեքուկես ժամ է, որի ընթացքում աշակերտները պետք է ստանան այն ամենը, ինչ հայկական է: «Վարժարան եկողները պարզ հայեր չեն, այլ աշխարհագրական նախածանցներով ճոխացած մի ամբողջ հույլ. կան սուրիահայեր ու լիբանանահայեր, թուրքահայեր ու կիպրահայեր, եգիպտահայեր ու եթովպահայեր, իրանահայեր ու իրաքահայեր», կարդում ենք վարժարանի 25-ամյակի առթիվ 2004-ին լույս տեսած հոբելյանական ալբոմի էջերում: Աշակերտության այս տարաբնույթ կազմն անշուշտ յուրահատուկ ուշադրություն է պահանջում, ինչն իր վրա է վերցրել վարժարանի ուսուցչական կազմը՝ բաղկացած գաղութի կամավոր անդամներից, որոնք իրենց ազատ ժամերը նվիրում են ազգային այդ սուրբ գործին: Օգտագործվում են Ամերիկայում, Իրանում, Հայաստանում եւ Վենետիկում տպագրված դասագրքեր:**

**Ուսումնական ծրագրի մաս են կազմում հայոց լեզուն, հայոց պատմությունը, կրոնը, երգեցողությունը, պատմական կարեւոր իրադարձություններին նվիրված հանդիսություններին պատրաստվելը (Ապրիլի 24, Վարդանանց հերոսամարտ, Սեպտեմբերի 21 եւ այլն), հատուկ զրույցները հրավիրյալ պատմաբանների, հոգեւորականների եւ արվեստագետների կողմից, ինչպես նաեւ հարցուպատասխանի միջոցառումները:**

**Ծավալվում է նաեւ արտադասարանային գործունեություն: Անցած տարիների ընթացքում աշակերտները մասնակցել են գեղարվեստական ծրագրով Իլինգ քաղաքամասի ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառմանը, Հայաստանի Հանրապետության դեսպանատան բացման արարողությանը, 1988-ի երկրաշարժի առթիվ անգլիական հեռուստատեսության ծրագրերին եւ այլն:**

**Վարժարանի առաջին տնօրենն է եղել դոկտ. Գեւորգ Չորպաճյանը, որը կարճատեւ պաշտոնավարությունից հետո մեկնել է Ավստրալիա: Նրան հաջորդել է դոկտ. Հովհաննես Ավագյանը՝ չորս տարի, որից հետո՝ 1983-ից մինչեւ 2005 թվականը, այդ պաշտոնը վարել է իրանահայ տիկին Անահիտ Ղազարյանը՝ Ուրմիա քաղաքից: Նա լեզվաբանության գծով բակալավրի, այնուհետեւ գրադարանագիտության գծով մագիստրոսի աստիճան է ստացել Թավրիզի համալսարանից: Լոնդոն հաստատվելուց հետո կրթությունը շարունակել է եւ ստացել մագիստրոսի երկրորդ աստիճանը Լոնդոնի համալսարանից:**

**Վարժարանի ներկայիս տնօրենն է տիկին Ռուզաննա Թաթուլյանը, ով ձեռնհասորեն շարունակում է իր նախորդների աշխատանքը, բարձր պահելով վարժարանի կրթական մակարդակը: 2010 թվին վարժարանը մասնակցելով ՀՀ Սփյուռքի նախարարության եւ Համաշխարհային Հայկական կոնգրեսի կազմակերպած «Լավագույն հայկական կրթօջախ» մրցույթին, ճանաչվել է մրցանակակիր եւ արժանացել հատուկ դիպլոմի:**

**Իր հիմնադրման օրվանից վարժարանը վայելել է լոնդոնահայության անվերապահ վստահությունն ու նյութական-բարոյական աջակցությունը: Իր անբասիր գործունեությամբ վարժարանը կարողացել է իր շուրջը համախմբել զանազան երկրներից Անգլիա հաստատված ընտանիքներին, ստեղծելով նրանց միջեւ մտերմություն եւ ջերմություն:**

**Վարժարանի 35-ամյակի առթիվ ցանկանում ենք հարատեւություն, անսպառ եռանդ ու մշտանորոգ խանդավառություն մատաղ սերնդի կրթության եւ հայեցի դաստիարակության դժվարին գործը բարեհաջող առաջ տանելու համար:**

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Աշխարհաքաղաքական ճեղքվածքում հայտնվելու դժվարությունները

Նախկին Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո, տարբեր երկրների բազմաթիվ քաղաքագետներ քիչ ջանքեր չեն գործադրել, որպեսզի մեկնաբանեն եւ քննադատեն այն տարիներին շատ մոդայիկ ամերիկացի հետազոտող Սեմյուիլ Հանթինգթոնի տեսությունը քաղաքակրթությունների բախման վերաբերյալ: Վերջին քսան տարիներին համաշխարհային քաղաքականության ամենամեծ փոփոխությունը, թերեւս միաբեւեռ աշխարհի ավարտն է եւ բազմաբեւեռ կամ բազմակենտրոն նոր աշխարհակարգի ձեւավորման գործընթացը: Ցավոտ էր այն ժամանակը, երբ աշխարհը դարձավ միաբեւեռ: Ցավոտ են եւ այն փոփոխությունները, որոնք տանում են դեպի բազմաբեւեռ նոր աշխարհակարգ: Բազմակենտրոն աշխարհի չորս խոշոր կենտրոններից (ԱՄՆ, Եվրոպական միություն, Ռուսաստան եւ Չինաստան) երեքի ազդեցությունը մեր թե՛ փոքր (Հարավային Կովկաս), թե՛ մեծ (հետխորհրդային տարածք) տարածաշրջաններում ընթացող քաղաքական եւ տնտեսական գործընթացների վրա, մեծապես զգալի են: Վերափախելով Ս. Հանթինգթոնի բառապաշարը, կարելի է պնդել, որ Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը, Ադրբեջանը եւ Հայաստանը հայտնվել են երկու աշխարհաքաղաքական բեւեռների՝ Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ գոյացող աշխարհաքաղաքական ճեղքվածքում: Այս հնգյակը, որ միաբեւեռ աշխարհի իրողություններին յուրաքանչյուրն իր ձեւով ադապտացվելու գործում քիչ թե շատ հաջողությունների էր հասել եւ հարմարվել, այսօր խոշոր բեւեռների միջեւ ընթացող խուլ պայքարի պայմաններում, հայտնվել է ներքաղաքական գաղափարական պայքարի եւ դրա առաջացրած զգայուն ցնցումների մեջ:

Ամառային արձակուրդների ավարտին անմիջապես կհաջորդեն քաղաքական եւ հասարակական աշխույժ քննարկումները նոր գծագրվող աշխարհաքաղաքական իրողությունների թելադրանքով նոր որոշումներ կայացնելու համար: Փորձենք վերլուծել այն վիճակը, որն առաջացել է Հայաստանի եւ հետխորհրդային տարածքի մյուս պետությունների համար աշնանային քաղաքական նոր սեզոնի նախօրեին:

### Տնտեսական թելադրանքներ եւ աշխարհայացքային ընտրություն

Հետխորհրդային պետություններից ամենախոշորն Ուկրաինան է, որը կանգնած է Վիլնյուսում նոյեմբերին Եվրոպական միության հետ ասոցիացման համաձայնագիրը ստորագրելու առջեւ: Ուկրաինայի այս քայլի կողմնակիցները պնդում են, որ սա ոչ այնքան տնտեսական, որքան աշխարհայացքային ընտրություն է, որովհետեւ ուկրաինական հասարակությունն արդեն իսկ կայացրել է ընտրություն դեպի Եվրոպական քաղաքակրթության մաս դառնալը: Ուկրաինայի ասոցիացման հակառակորդները երկրի ներսում (օրինակ՝ «Ուկրաինական ընտրություն» հասարակական շարժման ներկայացուցիչները) համոզված պնդում են, որ քաղաքակրթական փաստարկը մեջ է բերվել այն պարզ պատճառով, որ ոչ մի ռացիոնալ փաստարկ չկա ուկրաինական հասարակությանը համոզելու համար, որ Եվրոպական միությանը ասոցիացվելու արդյունքում, երկիրը կարող է որեւէ շոշափելի տնտեսական օգուտ ակնկալել: Նրանք պնդում են, որ տնտեսական օգուտ ասելով, նախ եւ առաջ պետք է հասկանալ տնտեսության զարգացումը եւ ներքին համախառն արդյունքի աճը: Իսկ դա ակնկալել ավելի շուտ պետք է Ռուսաստանի եւ մյուս հարեւանների հետ հարաբերությունները զարգացնելու ճանապարհով: Հետաքրքիր է, որ այս քննարկումները Ուկրաինայում աշխուժացել են այն բանի արդյունքում, որ Եվրոպական միությունը զգալի տնտեսական դժվարությունների շրջան է ապրում եւ նրա հետ հարաբերությունները սերտացնելու կողմնակից ուկրաինական քաղաքական շրջանակները չեն կարողանում վստահեցնել իրենց հասարակությանը, որ Բրյուսելից նոր վարկեր, գրանտներ կամ մեծածավալ ներդրումներ կարելի է սպասել: Ուկրաինայում ներքաղաքական այս քննարկումների թեժացմանը, անշուշտ, նպաստել է վերջին օրերին իրական դարձած այն սպառնալիքը, որ Ռուսաստանը դեպի Եվրոպական միություն հեռացող Ուկրաինային կարող է դնել տնտեսական ծանր իրավիճակի մեջ, փակելով իր երկիր մտնող ուկրաինական ապրանքների ճանապարհը: Գազի թանկացող գնի հետ մեկտեղ այս քայլը մի սպառնալից նախազգուշացում է, որը ուկրաինական քաղաքական դաշտը ուղղակի անտեսել արդեն չի կարող:

Մոլդովայի նախագահի պաշտոնակատարի խորհրդական, Բուխարեստի համալսարանի պրոֆեսոր Դունկաչիուն մոլդովական լրատվամիջոցներից մեկի համար ասել է, որ Եվրոպական միությանը Մոլդովայի ասոցիացման հեռանկարը եվրաինտեգրման առումով երկրի համար որեւէ պարտավորություն չի պարունակում: Նա բացատրել է, որ «Արեւելյան գործընկերության» ծրագիրը նախապատրաստվել է ոչ թե Եվրոպական միության անդամության թեկնածուների, այլ հարեւանների համար: Հետեւաբար, պետք է հասկանալ այնպես, որ Վիլնյուսի գագաթնաժողովից հետո էլ ԵՄ-ին ասոցացված Մոլդովան մնալու է որպես Եվրոպական միության հարեւան, այլ ոչ թե պարտավորություններ ստանձնած անդամության հեռանկարային թեկնածու: Հիշեցնենք, որ Մոլդովան ունի հակամարտություն Մերձդնեստրյան ինքնահռչակ հանրապետության հետ, որը գործնական քայլեր է կատարում Եվրասիական ինտեգրման ուղղությամբ, ցանկանալով հեռանկարում լինել Եվրասիական միության համակարգում: Այլ հարց է, թե ինչպես է դա ձեւակերպվելու միջազգային իրավունքի տեսանկյունից, բայց գործնական քայլեր Եվրասիական ինտեգրմանը նպաստելու ուղղությամբ Տիրասպոլում անում են:

Վրաստանը չի շեղվելու արեւմտյան աշխարհի մաս դառնալու իր նախանշած կուրսից: Այս մասին պաշտոնական Թբիլիսին հայտարարել է բազմիցս: Բայց ակնհայտ է, որ վերջին ամիսներին Վրաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ անընդհատ բարելավվելու միտում ունեն, իսկ Մոսկվայում տարբեր քաղաքագետներ նշում են, որ ռուս-վրացական տնտեսական համագործակցությունը նոր որակի բարձրացնելու համար կան իրական հնարավորություններ: Վրացական հասարակության մեջ սրված հակառուսական տրամադրություններին կամաց-կամաց փոխարինելու են գալիս պրագմատիկ տնտեսական շահերի վրա հիմնված նոր բարյացակամ մոտեցումները:

Ադրբեջանը, Թուրքիան, Ղազախստանը եւ Ղրղզստանը ցանկանում են ստեղծել թյուրքական մաքսային միություն: Նրանց նպատակն է վերացնել մաքսային անջրպետները չորս երկրների միջեւ եւ Կենտրոնական Ասիան Միջերկրական ծովին եւ Եվրոպային կապող տարանցիկ մի նոր հարմար ճանապարհ բացել: Անշուշտ, հասկանալի չէ, թե ինչպե՞ս են Մաքսային միության եւ ապագա Եվրասիական միության անդամ հանդիսացող Ղազախստանը կամ 90%-ով այդ միությանը անդամության «ճանապարհային քարտեզն» անցած Ղրղզստանը համատեղելու իրենց այդ կարգավիճակը թյուրքական մաքսային միությանը անդամակցելու հետ: Սակայն հայտնի է, որ թյուրքական այս ալիանսի բոլոր անդամները գործնական փնտրտուքի մեջ են նաեւ միասնական շուկա ձեւավորելու ուղղությամբ:

### Եվրասիական միության իրական նպատակները

Ապագա Եվրասիական միության ձեւավորման գործընթացում կամաց-կամաց հստականում են առաջնահերթ նպատակները եւ խնդիրները: Եթե անցյալ տարիների նախնական փուլում խոսվում էր այն մասին, որ ապագա Եվրասիական միությունը ունենալու է սեփական տարադրամ, ապա այսօր հայտարարվում է, որ նման խնդիր առաջիկա տարիներին չի դրվելու: Եթե նախկինում ակնարկվում էր այն մասին, որ ապագա Եվրասիական միությունը հետխորհրդային տարածքի պետությունների տնտեսական, քաղաքական եւ անվտանգային անդրազգային կառույց է լինելու, ապա այսօր հայտարարվում է, որ ռազմաքաղաքական եւ անվտանգային խնդիրներ մոտակա տարիներին քննարկել չի նախատեսվում, ասես հասկացնելով, որ այդ խնդիրները շարունակելու է լուծել արդեն իսկ գոյություն ունեցող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ-ը): Մենք տեղեկություններ չունենք այն աշխատանքային քննարկումների մասին, որոնք ընթանում են ապագա Եվրասիական միությունը ձեւավորողների շրջանում: Սակայն պարզ է, որ նման հայտարարությունները նպատակ ունեն միջազգային հանրությանը մի անգամ եւս ապացուցելու, որ, լինելով Եվրասիական միության ձեւավորման լոկոմոտիվը՝ Ռուսաստանը նպատակ չի դնում վերականգնել Խորհրդային Միությունը, կամ, ասենք, Ռուսական Կայսրությունը, այլ ստեղծում է մի տնտեսական ժամանակակից միջազգային համակարգ, որի նպատակը Եվրասիական տարածքում ֆինանսների, ապրանքների եւ աշխատուժի ազատ տեղաշարժ ապահովելն է: Թե որքանով են այս քայլերը փարատում ամերիկացիների եւ եվրոպացիների կասկածները, դժվար է ասել, սակայն ակնհայտ է, որ «Արեւելյան գործընկերության» պետություններին ասոցիացնելով Եվրոպական միության հետ, պաշտոնական Բրյուսելն առաջին հերթին նպատակ ունի ուժեղացնել Ռուսաստանի հետ կապող բուֆերային տարածքները:

Ռուսաստանի Նախագահի խորհրդական Գլազյեւը մի քանի առիթով ասել է, որ անդամակցությունը Մաքսային միությանը եւ ասոցիացումը Եվրոպական միությանը համատեղելն անհնար է: Այս հայտարարությունները ամրապնդվել են տնտեսագետների այլ հայտարարություններով, որ Ռուսաստանը թույլ չի տա ստեղծել մաքսային սողանցքեր եվրոպական ապրանքները «արեւելյան գործընկերների» տարածքով Ռուսաստան տեղափոխելու համար: Կարծես իրական են դառնում նաեւ այն սպառնալիքները, որ եվրոպական շուկային անդամակցելու դեպքում Ռուսաստանը կարող է մաքսային պատնեշներ դնել հետխորհրդային պետությունների առջեւ:

### Ինչպիսի՞ն կլինեն համագործակցության եւ առճակատման միջեւ գծագրվող լուծումները

Քաղաքագետները սպասում են, որ սեպտեմբերին Ռուսաստանի, Եվրոպական միության եւ ԱՄՆ-ի ղեկավարների միջեւ կարող են ձեռք բերվել պայմանավորվածություններ, որոնք համագործակցության նոր դաշտ կբացեն, այդ թվում, Եվրոպական միության եւ Ռուսաստանի միջեւ: Նման դատողություններ անցնող ամիսների ընթացքում արվել են բազմիցս եւ պետք է ակնկալել, որ առաջիկայում համագործակցության նման եզրեր կարող են եւ գտնվել: Սակայն, եթե նման բան մոտակա ամիսներին տեղի չունենա եւ Ռուսաստանում հաղթեն ինքնուրույն բեւեռի շուրջ դաշնակիցներին համախմբելու գաղափարի կողմնակիցները, ապա Հայաստանի համար, ճիշտ այնպես, ինչպես մյուս «Արեւելյան գործընկերների» կարող են առաջանալ լուրջ դժվարություններ: Սեպտեմբերի վերջին հայտնի կդառնան այն տնտեսագիտական հաշվարկ-եզրակացությունները, որոնք թույլ կտան տնտեսագիտական պատշաճ մակարդակով դատողություններ անել Եվրասիական միությանը Հայաստանի ավելի սերտ մասնակցության ձեւի եւ չափի վերաբերյալ: Մինչ այդ, ինչպես եւ Ուկրաինայում, մեզանում լավագույն դեպքում դատողությունները հանգելու են արժեքային համակարգերի նախապատվությանը եւ աշխարհայացքային մոտեցումներին: Բայց նույն Ուկրաինայի փորձը ցույց է տալիս, որ այդ կարգի խոսակցությունները, որոնք հիմնված չեն տնտեսագիտական համոզիչ փաստարկների վրա, լոկ բորբոքում են կրքերը եւ խաթարում են այսքան դժվարությամբ ձեւավորված ներքաղաքական կայունությունը:

Մենք կողմնակից ենք հասարակական դաշտում այս հարցերի քննարկումները շարունակելուն: Բայց համաձայն չեմ լրագրող գործընկերների այն դատողություններին, թե մեր հասարակությունն անտեղյակ է Եվրոպական կամ Եվրասիական ինտեգրման գործընթացների մանրամասներից եւ կամ անտարբեր է կողմնորոշումների հարցում: Անցած ութ-ինը ամիսների ընթացքում այս խնդիրների մասին այնքան է ասվել եւ խոսվել, որ հիմա քաղաքական դիրքորոշումներ ձեւավորելու ժամանակն է: Եթե Հայաստանի արտաքին քաղաքական քայլերը տանեն դեպի Եվրոպա-Ռուսաստան համագործակցության դաշտ, մենք կարող ենք նաեւ օգուտներ ակնկալել: Եթե քաղաքական քայլերը տանեն դեպի Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ իրականում գոյություն ունեցող աշխարհաքաղաքական ճեղքվածք, ապա երկուսից առնվազն մեկի կողմից պետք է հարվածներ սպասել: Դժվար է ասել, թե մեր քաղաքական եւ տնտեսական համակարգերը որքանով են հարմարեցված ուժային տարբեր բեւեռների միջեւ ձեւավորվող հակասությունների պայմաններում դիմակայելուն: Սա ասում եմ այն պարզ պատճառով, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական համադրույթը մինչեւ հիմա կառուցված է եղել ուժային բոլոր կենտրոնների հետ բարյացակամ հարաբերություններ ունենալու սկզբունքի հիման վրա: Մոտակա ամիսների քաղաքական գործընթացները կարող են տանել նաեւ ոչ թե կառուցողական դաշտ, այլ՝ լարվածության եւ հակասության: Հենց դրա համար ենք մտահոգություն հայտնել մեր նախորդ հոդվածում, թե արդյոք եկե՞լ է արտաքին քաղաքականության բառապաշարը, ասել է թե գործիքակազմը, փոխելու ժամանակը: Այս հարցում պարզություն մտցնելը կարող էր դառնալ մեր քաղաքագետների եւ տնտեսագետների լուրջ ծառայությունը մեր հասարակությանը:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, քաղաքական գիտությունների թեկնածու**

# Ադրբեջանում ազատազրկված նախկին նախարարը դատի կտա Գերագույն դատարանի նախագահին

Այս մասին երեկ «Թուրան» գործակալությանն ասել է 2005թ. հոկտեմբերին «պետական հեղաշրջում կազմակերպելու» կասկածանքով ձերբակալված, բայց հետագայում «տնտեսական հանցագործությունների համար» 11 տարվա ազատազրկման դատապարտված՝ Ադրբեջանի առողջապահության նախկին նախարար Ալի Ինսանովի փաստաբանը:

Բանն այն է, որ Ինսանովը դիմել էր Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական դատարան: Վերջինս սույն թվականի մարտի 14-ին բավարարել է նախկին նախարարի հայցը եւ հաստատել, որ նա զրկվել է արդարացի դատավարության իրավունքից, անազատության մեջ գտնվելու ժամանակ ենթարկվել կտտանքների: ՄԻԵԴ-ն Ադրբեջանի կառավարությանը պարտավորեցրել է 10 000 եվրո վճարել Ինսանովին՝ որպես կրած վնասների փոխհատուցում: 2007թ. ապրիլին ադրբեջանական դատարանի վճռով Ալի Ինսանովի անձնական գույքը բռնագրավվել է:

Ինսանովի փաստաբան Թողրուլ Բաբաեւը «Թուրան» գործակալությանն ասել է, որ ՄԻԵԴ-ի որոշումը վերջնական ուժի մեջ է մտել անցած հուլիսի 14-ին: «Օրենքով ՄԻԵԴ-ի որոշումը պետք է իրականացվի Գերագույն դատարան մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, Գերագույն դատարանի նախագահը պետք է գործը հանձնարարի դատավորներից մեկին եւ ներկայացնի ԳԴ պլենումին», ադրբեջանական օրենսդրության կարգն այսպես է բացատրել փաստաբանը եւ ավելացրել, որ «Ալի Ինսանովոնին առայժմ գործը Գերագույն դատարանի պլենումին ներկայացնելու մասին որեւէ պաշտոնական տեղեկատվություն չի տրամադրվել, չնայած որ ՄԻԵԴ-ի որոշումը Գերագույն դատարանին է տրվել հուլիսի 10-ին»:

Փաստաբանի խոսքերով, «Ալի Ինսանովը համարում է, որ Գերագույն դատարանի անգործությունը պատվիրված քաղաքականության շարունակությունն է, որ իր հանդեպ տարվում է ահա արդեն 9 տարի, ամեն ինչ արվում է, որպեսզի երկարաձգվի նրա անազատության մեջ գտնվելը»: Նախկին նախարարը Գերագույն դատարանի նախագահ Ռամիզ Ռզաեւին կոչ է արել չձգձգել ՄԻԵԴ-ի որոշման կատարումը: Հակառակ դեպքում նա սպառնացել է Ռզաեւի դեմ դատական հայց հարուցել եւ դիմել ԵԽ Նախարարների կոմիտեին:

Իր հերթին Ադրբեջանի Գերագույն դատարանի քարտուղարությունը «Թուրան» գործակալությանը տեղեկացրել է, որ Ալի Ինսանովի գործով «ՄԻԵԴ-ի որոշում չի ստացվել»: Ինչպե՞ս կարող է հայցվորն ստանալ ՄԻԵԴ-ի որոշումը, իսկ Գերագույն դատարանը՝ ոչ, սա երեւի ադրբեջանական փոստային ծառայությունների «նոու-հաու»-ն է: Բայց իրականում խնդիրն ավելի խորքային է:

Հեյդար Ալիեւի կառավարությունում Ալի Ինսանովը չափազանց հեղինակավոր նախարար է եղել, վայելել «համազգային առաջնորդի» վստահությունը: Ոչ պաշտոնապես Ինսանովը համարվել է Ադրբեջանում ծագումով հայաստանցիների պարագլուխը, որ տարիներ շարունակ նրանց համախմբել է իշխող ընտանիքի շուրջը: Թե ինչո՞ւ են նրա հարաբերությունները հետագայում Իլհամ Ալիեւի հետ սրվել՝ մնում է գաղտնիք: Որոշ ակնարկների համաձայն, դրանում մեծ է Ջալալ Ալիեւի՝ Ադրբեջանի նախագահի հորեղբոր դերակատարությունը, որն իբր «նպատակ ուներ դառնալ նախագահ»:

Բանտում Ալի Ինսանովը բազմիցս ենթարկվել է բռնությունների: Իշխանական լրատվամիջոցները անցյալ տարի նույնիսկ գրել էին, որ նրա «առողջական վիճակը կտրուկ վատթարացել է»: Չի բացառված, որ նրան շարքից հանելու ինչ-որ ծրագիր եղել է, եւ Ինսանովը փրկվել է միայն շնորհիվ այն բանի, որ նրանով զբաղվել է ՄԻԵԴ-ը: Վերջերս տեղեկություն էր տարածվել, որ նախկին նախարարը «պատրաստվում է Իլհամ Ալիեւի անունով ներման խնդրագիր ներկայացնել», սակայն Ինսանովի փաստաբանը հերքել էր իր պաշտպանյալի այդ «մտադրությունը»:

Ադրբեջանի դատական իշխանությունները, թերեւս, ՄԻԵԴ-ի որոշման կատարումը ձգձգում են՝ հույս պահելով, որ Ինսանովն այնուամենայնիվ «կկոտրվի եւ ներում կհայցի»: Այդ դեպքում Իլհամ Ալիեւը կկարողանա «փրկել» դեմքը, իսկ նախկին նախարարը, գտնվելով ազատության մեջ, այլեւս վտանգավոր չի լինի: Ինչպես կարելի է ենթադրել վերոհիշյալ տեղեկատվությունից, Ալի Ինսանովը պատրաստվում է մինչեւ վերջ սկզբունքային մնալ եւ հասնել արդարության վերականգնմանը:

Վ. Ա.

# Դեմպսին սիրիացի ապստամբներին օգնելը ձեռնտու չի համարում



ԱՄՆ բանակի շտաբների պետերի միացյալ կոմիտեի ղեկավար, գեներալ Մարտին Դեմպսին կոնգրեսական Էլիոթ Էնջելին հղած նամակում բացատրել է, թե ինչու ԱՄՆ-ը չի շտապում օգնել սիրիացի ապստամբներին: Դեմպսին վստահ է, որ վերջիններիս հաղթանակը չի ծառայի ամերիկացիների շահերին, նշում է BBC-ն:

«Ստիպված ենք ընտրություն կատարել ոչ թե երկու, այլ բազմաթիվ կողմերի միջեւ: Ես գտնում եմ, որ մեր ընտրելիք կողմը պետք է պատրաստ լինի, իր համար բարենպաստ իրադրության ստեղծման դեպքում, հոգալ ոչ միայն սեփական, այլեւ մեր շահերի մասին: Այժմ նման կողմ պարզապես չկա», գրում է նա:

«ԱՄՆ-ի ռազմական միջամտությունը կարող է փոխել ուժերի հավասարակշռությունը, բայց անկարող է օժանդակել հակամարտության պատմական, էթնիկական լուծմանը», համոզված է գեներալը:

Դեմպսին գտնում է, որ ԱՄՆ-ի վարչակազմը պարտավոր է գործել երկու հիմնական ուղղություններով: Առաջին, օժանդակել կենտրոնացված չափավորական ընդդիմության ձեւավորմանը: Երկրորդ, նպաստել հումանիտար ճգնաժամի հաղթահարմանը:

Պ. Ք.

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՇՏԱՊ վաճ. է 3 սեն. բն. Դեմիրճյան 27/1 բն. 30 հասցեում, 5 հարկանի քարե շենքի բարձր 1-ին հարկում: Վերանորոգված, տաք եւ սառը ջուր, 2 նկուղ, ավտոկայանատեղ, կահավորված: Հնարավոր է կահույքով եւ առանց կահույքի: Ունի առաջ գնալու մեծ հնարավորություն: Գինը՝ 120.000 $-ին համարժեք դրամ: Մակերեսը՝ 80.3 քմ:
Հնարավոր է օրավարձով՝ գինը՝ 50 $-ին համարժեք դրամ:
Հեռ.՝ 099-631-333:

Մ. ՆԱԶԱՆՑԵՐ

# 35 տարվա ազատազրկման դատապարտված Մեննինգը ներողություն է խնդրում

*«Խայտառակության օր» ԱՄՆ-ի համար*



**Մերիլենդի նահանգի ռազմական դատարանը երկու ամիս տեւած դատավարությունից հետո 35 տարվա բանտարկության է դատապարտել ԱՄՆ բանակի շարքային Բրեդլի Մեննինգին: BBC-ն նշում է, որ այդ ժամկետը ներառում է բանտում արդեն անցկացված 3,5 տարին: Մեննինգը մեղավոր է ճանաչվել պետական գաղտնի տեղեկությունների հրապարակման մեջ: Նրան նաեւ հեռացրել են զինված ուժերից:**

**Մեննինգը WikiLeaks կայքէջին փոխանցել է ավելի քան 700 հազար գաղտնի փաստաթղթեր, այդ թվում՝ դիվանագիտական հեռագրեր եւ գաղտնի հաշվետվություններ Իրաքում եւ Աֆղանստանում զինծառայողների հետ կապված զանազան միջադեպերի վերաբերյալ:**

**Մեղադրող կողմը պահանջում էր 60 տարվա ազատազրկում, իսկ դատապաշտպանները՝ 25:**

**Մեննինգին ձերբակալել էին 2010-ին Իրաքում, որտեղ նա ծառայում էր որպես զինվորական վերլուծաբան: Սկզբում նրան մեղադրել էին 22 կետերով, ներառյալ թշնամուն օգնելը, բայց հետագայում այդ մեղադրանքը հանվել էր: Ի վերջո նրան մեղավոր ճանաչեցին գաղտնի տեղեկությունների հրապարակման հետ կապված 20 կետերով:**

**Դատարանում Մեննինգը հայտարարեց, որ ինքը մտադրություն չի ունեցել վնասելու իր երկրին կամ դրա զինծառայողներին, այլ ուզեցել է աշխարհի տեղեկացնել, թե ԱՄՆ ղեկավարությունն ինչպիսի քամահրանքով է վերաբերվում համայն աշխարհի ռազմական գործողությունների շրջաններում ապրող խաղաղ բնակչությանը:**

**«Ֆիգարո» թերթը տեղեկացնում է, որ պատժաժամկետի 1/3-ը բանտում անցկացնելուց հետո, այսինքն՝ նվազ քան 9 տարի հետո Մեննինգը կկարողանա պայմանական ազատություն ստանալ: Իսկ առայժմ նրա փաստաբանը ներման խնդրագիր կներկայացնի նախագահ Բարաք Օբամային:**

**Դատավճռի հրապարակումից հետո ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում բողոքի ցույցեր անցկացվեցին ի պաշտպանություն Բրեդլի Մեննինգի: Փաստաբան եւ իրավապաշտպան Քեւին Զիիսը մասնավորապես հայտարարեց. «Այսօր խայտառակության օր է ԱՄՆ-ի համար: Մեննինգի հրապարակած հանցագործությունները հետաքննելու փոխարեն, իշխանությունները նրան բանտարկեցին 35 տարով: Նա ճշմարտությունը պատմեց ամերիկյան ռազմամոլության, ԱՄՆ կայսրության մասին, որը գործում է ոչ թե հանուն ժողովրդավարության, այլ ի շահ վերազգային կորպորացիաների»:**

**Երեկ Մենինգը ներողություն խնդրեց գործած զանցանքի համար:**

Պ. Ք.

# Մուբարաքին կփոխադրեն տնային կալանքի



**Եգիպտոսում 3 տարի իշխելուց հետո 2011-ի փետրվարին տապալված եւ բանտարկված նախագահ Հոսնի Մուբարաքը, որը մեղադրվում է կաշառակերության եւ սպանությունների մեջ, Կահիրեի դատարանի վճռի համաձայն դուրս է եկել բանտից: Երկրի նախագահի պաշտոնակատար Ադլի Մանսուրը որոշել է, որ 85-ամյա Մուբարաքը տնային կալանքի տակ կպահվի մինչեւ իր գործով դատական նոր լսումների սկսվելը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Այս շաբաթ ավելի վաղ հայտնի էր դարձել, որ դատախազությունը հանել է նախկին նախագահին ներկայացված կաշառակերության մեղադրանքները: Մուբարաքին նոր դատաքննություն է սպասում 2011 թ. հեղափոխության ժամանակ վարչակարգի 850 հակառակորդների սպանությանը մեղսակից լինելու մեղադրանքով: 2012-ի հունվարին նա դատապարտվել էր ցմահ բանտարկության, սակայն մեկ տարի անց դատավճիռը չեղյալ էր հայտարարվել:**

**Եգիպտոսի օրենքների համաձայն, նոր դատավարության սպասող ամբաստանյալը չի կարող բանտում մնալ երկու տարուց ավելի:**

Պ. Ք.

ԼՈՒՐԵՐ

## «Նոր անուններ» ծրագիր

Մշակույթի նախարարության աջակցությամբ 2013 թ. հուլիսի 26-ից օգոստոսի 9-ը Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի անդամ, միջազգային եւ հանրապետական մրցույթ-փառատոնների դափնեկիր, Վ. Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի կրթաթոշակառու, Երեւանի Պ. Ի. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի սան Անդրանիկ Աղաջանյանը եւ Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի անդամ, Միհայել Մալունցյանի անվան արվեստի դպրոցի սան Ռուբիկ Սարգսյանը մասնակցել են ՌԴ Սուզդալ քաղաքում կայացած «Նոր անուններ» 21-րդ միջազգային ամառային ստեղծագործական դպրոցի 2-րդ դասաշրջանին: Այս տարի ամառային դպրոցին մասնակցել է ԱՊՀ երկրների շուրջ 240 երեխա:

Թավջութակի դասընթացները վարել է ՌԴ վաստակավոր արտիստ, Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ալեքսեյ Սելեզնյովը: Շնորհալի պատանիները կարճ ժամանակահատվածում սովորել եւ ներկայացրել են նոր ստեղծագործություններ:

Անդրանիկ Աղաջանյանը մասնակցել է նաեւ ՌԴ վաստակավոր արտիստ Թամարա Օգանեզովայի վարպետության դասընթացներին եւ «Նոր անուններ» 21-րդ միջազգային ամառային ստեղծագործական դպրոցի 2-րդ դասաշրջանի եզրափակիչ համերգին:

## Երիտասարդական նվագախմբի նոր համերգաշրջան

Երիտասարդական նվագախումբը սկսում է 2013-2014 համերգաշրջանը: Այս համերգաշրջանի ընթացքում եւս նվագախումբը պատրաստել է բազմաթիվ անակնկալներ, հարուստ ծրագիր, համերգներ աշխարհահռչակ մենակատարների հետ:

Առաջիկա համերգը տեղի կունենա սեպտեմբերի 10-ին Արամ Խաչատրյան համերգասրահում: Համերգի հատուկ հյուրն է դաշնակահարուհի Ջուլիա Ձիլբերկվիստը: Ծրագրում կհնչեն՝ S. Slonimsky - Jewish Rhapsody Concerto for Piano, Strings, Flute and Percussions: Տոմսերի արժեքը 1.000 - 5.000 դրամ:

## Բացվելու է Ալեքսանդր Աճեմյանի աստղ-հուշաքարը




Օգոստոսի 25-ին Տերյան 76 հասցեում կկայանա հայկական ջազի աստղերի ճեմուղում հայտնի կոմպոզիտոր Ալեքսանդր Աճեմյանի աստղ-հուշաքարի բացումը եւ Հայաստանի Հանրային ռադիոյի ջազ բենդի տոնական համերգը (դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար՝ Երվանդ Երզնկյան) ջազ եւ էստրադային կատարողների մասնակցությամբ, նվիրված Ալեքսանդր Աճեմյանի 88-րդ ամյակին: Այս մասին հայտնում են «Յանս մյուզիք հոլ»-ից:

Սա արդեն 4-րդ աստղ-հուշաքարն է հայկական ջազի աստղերի ճեմուղում, որը տեղադրված է «Յանս մյուզիք հոլի» նախաձեռնությամբ: Մինչ այդ բացվել են Արտեմի Այվազյանի, Կոնստանտին Օրբելյանի եւ Առնո Բաբաջանյանի հուշաքարերը:

Ալեքսանդր Աճեմյանի աստղ-հուշաքարի բացումը նվիրված է կոմպոզիտորի 88-րդ տարեդարձին: Միջոցառմանը կմասնակցեն արվեստի եւ մշակույթի գործիչներ, կոմպոզիտորի ընտանիքի անդամներ, ինչպես նաեւ կառավարության եւ Երեւանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

## Բոհջալյանի նոր գիրքը՝ «Լույս ավերակների մեջ»

«Նյու Յորք թայմս»-ի գնահատմամբ ամենից շատ վաճառվող գրքերի հեղինակ, գրող Քրիս Բոհջալյանը հուլիս ամսվա ընթացքում շրջագայության է դուրս եկել ներկայացնելու համար իր նոր «Լույս ավերակների մեջ» խորագրով վեպը, որը սիրո, հուսահատության եւ վրեժի մասին է: Իրադարձությունները տեղի են ունենում Տոսկանայում:

Գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել ՀԲԸՄ-ի Նյու Յորքի գրասենյակում: Այնուհետեւ նաեւ Նյու Ջերզիի Հովնանյան վարժարանում: Ըստ Բոհջալյանի ՀԲԸՄ-ն եւ Հովնանյան վարժարանը աջակցել են իրեն գիրքը գրելու, ինչպես նաեւ պատմական Հայաստան կատարած ուղեւորության ընթացքում:

Տեղեկությունը՝ Կանադայում հրատարակվող ԹՄՄիության «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթից:

Հ. Ծ.

## «+Կինո»-ի հոբելյանական 20-րդ համարը

- Հինգ տարվա ընթացքում «+Կինո» ամսագրի 20 համար է լույս տեսել, յուրաքանչյուրը՝ 100 էջի սահմաններում: Հարց է ծագում՝ դա շատ է, թե՞ քիչ:

- Եթե հաշվի առնենք, որ ֆինանսական արդի սուղ պայմաններում, 2008 թվականից մինչեւ այսօր, առանց ընդհատումների, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության ջանքերով եւ Մշակույթի նախարարության օժանդակությամբ եռամսյակը մեկ հրատարակվել է բարձրարժեք եւ ասելիք ունեցող եւ գեղարվեստի ինքնատիպ ոճի մատուցմամբ ամսագիր, ապա կարող ենք հավաստել, որ այսօր հանրապետությունում ունենք կայացած մշակութային լուրջ պարբերական: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ ամսագրի հրատարակման գործում մեծ ներդրում ունի կինոմիության նախագահ Ռուբեն Գեւորգյանցը:

«+Կինո»-ն անդրադառնում է նաեւ թատերական արվեստին, երաժշտությանը, գեղանկարչությանը, ճարտարապետությանը, քաղաքաշինությանը եւ գեղարվեստական լուսանկարչությանը:

- Իզուր չէ ասված, որ մամուլի ամեն մի օրգան իր խմբագրի դեմքն է: Այս դեպքում կարելի է նշել, որ Հայաստանի եւ Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միությունների անդամ, «+Կինո»-ի գլխավոր խմբագիր Ռոբերտ Մաթոսյանն իր ողջ կյանքը՝ շուրջ 45 տարի նվիրել է պարբերական մամուլին: Նա դեռեւս խորհրդային տարիներին խմբագրել է «Ֆիլմ», այնուհետեւ «Գեղարվեստ» թերթերը, որոնք ավելի քան 40 հազար տպաքանակ են ունեցել:

- Իսկ ինչպիսի հրապարակումներ են տեղ գտել «+Կինո»-ի 20-րդ հոբելյանական համարում հարցին ահա, թե ինչ ասաց նա.

- Մինչ պատասխանելը ասեմ, որ 20-րդ համարը մեզ համար հերթական սովորական թողարկում է: Միայն նշեմ, որ ի սկզբանե «+Կինո»-ի հիմնական նպատակներից մեկն է մեր երիտասարդ սերնդին, որը ծնվել է մութ ու ցուրտ, դժգույն տարիներին, ներկայացնել ավագ սերնդի ստեղծած արվեստն ու մշակույթը: Այսինքն հոգեւոր արժեքների կապ եւ կամուրջ ստեղծել ավագ եւ ներկա սերունդների միջեւ: Այս ամենը լուրջ եւ տարողունակ խոսակցության առանձին նյութ է:

20-րդ համարը բացվում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի «Կորցնելով ռուսական մշակութային դաշտը, մենք կորցնում ենք ամեն ինչ...» ծավալուն եւ հետաքրքրական հարցազրույցով: Հայ թատրոնի ու մշակույթի լեգենդը մեր երկխոսության ընթացքում 83-ամյա իմաստնության բարձունքից իր մտորումներն ու խոհերն է կիսում ընթերցողների հետ: Ես միշտ Սոս Սարգսյանին համարել եմ մեր ժամանակների Հովհաննես Թումանյանը եւ սա գերագնահատանք չէ:

«Ոսկե ծիրան» 10-րդ հոբելյանական միջազգային կինոփառատոնի արդյունքներին է անդրադարձել պարբերականի ռեպորտյոր Մարիաննա Մելիքսեթյանը: «Մեր կողքինը մեզ շատ մոտ է, ուշադրություն չենք դարձնում», Աշոտ Ադամյան-Լիզա Ճաղարյան զրույցը ներկայացնում է 60-ամյա անվանի դերասանի ստեղծագործական ուղին, ում դիմանկարը տպագրված է ամսագրի շապիկին: «Հուշագրություն» խորագրի ներքո ՀՀ ժողովրդական նկարիչ Ստեփան Անդրանիկյանը պատմում է, թե ինչպես ինքն ու Հենրիկ Մալյանը Դոնի Ռոստովում «Ճանապարհ դեպի կրկես» ֆիլմում նկարահանվելու առաջարկով հանդիպել են Լեոնիդ Ենգիբարյանին եւ համոզել, որպեսզի նա նկարահանվի իրեն իսկ նվիրված կինոնկարում: Հենց այդ օրն էլ Անդրանիկյանը ստեղծել է Լեոնիդի դիմանկարը:

«Օհան Դուրյան՝ լեգենդ, թե՞ իրականություն» Դանիել Երաժշտի վերլուծական հոդվածը նորովի մի մեկնություն է համաշխարհային դիրիժորական արվեստում մեծ ներդրում ունեցող մաեստրոյի գործունեությանը:

«Ես հպարտ եմ, որ Հայաստանի տարածքից Ադրբեջանի զավթած ավելի քան 14,5 հազար հեկտար հող ետ բերեցի», այս վերնագիրն է կրում մեր երկխոսությունը՝ նվիրված պետական, կուսակցական ականավոր գործիչ Վլադիմիր Մովսիսյանի ծննդյան 80-ամյակին:

«Կարծիքներ, գրախոսականներ» խորագրի ներքո երիտասարդ կինոգետներ Անի Հակոբյանը, Արթուր Վարդիկյանը եւ Արծվի Բախչինյանը անդրադարձել են ռեժիսորներ Հարություն Խաչատրյանի «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ...», Գրիգոր Հարությունյանի «Կայացում» եւ Արմեն Խաչատրյանի «Մենք կանք» ֆիլմերին:




«Կինոգերդաստաններ» շարքի այս անգամվա հյուրն են ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, բեմադրող նկարիչ Ռաֆայել Բաբայանի որդիները՝ Գագիկ եւ Դավիթ Բաբայանները: Հոդվածագիրը՝ Սաթենիկ Ավագյանը, էքսկուրսի հետ մեկտեղ ներկայացնում է արդի կինոյում բեմադրող նկարչի դերին եւ խնդիրներին: «Լեոնիդ Ազգալդյան. Եթե գան ու Ձեզ ասեն, որ ես զոհվել եմ, չհավատաք: Ես Ստամբուլի պատերի տակ եմ ընկնելու»: Արցախյան հերոսամարտի աննկուն մարտիկ Լեոնիդ Ազգալդյանի այս խոսքերն է իր հոդվածի բնաբանը դարձրել Հանրային ռադիոյի «Ապրելու բանաձեւ» վավերագիր մատենաշարի հեղինակ Գոհար Մարտիկյանը, ով ականատեսների միջոցով ներկայացրել է մեծ հայրենասերի եւ մտավորականի դիմանկարը:

«Այդ լուսավոր ու զարմանալի Կարիկ Պասմաճյանը» վերնագիրն է կրում Ռ. Մաթոսյանի հոդվածը, որում անդրադարձ է կատարում բանաստեղծ, թարգմանիչ, հրատարակիչ, հետագայում գեղանկարների հազվագյուտ հավաքածու հայորդիներից մեկի՝ Կարիկ Պասմաճյանի 25-ամյա անհայտացման առեղծվածին: Նա կարծես իր այնքան շատ սիրելի Խաչատուր Աբովյանի նման «տնից դուրս է եկել եւ այլեւս չի վերադարձել»: Այդ տաղանդաշատ մարդուն եւ բանաստեղծին է նվիրված նաեւ ռեժիսոր Պարգեւ Մալայանի «Կարիկ Պասմաճյան» ֆիլմը, որը նկարահանել է «Հայկ» կինոստուդիայում:

«Թեմաներ ֆիլմերի համար» շարքում այս անգամ տեղ է գտել լրագրող, կինովավերագիր Արտյոմ Երկանյանի հոդվածը՝ նվիրված ֆրանսահայ բարերար Կարպիս Նիկողոսյանին, որն անում է հնարավոր ամեն բան Հայաստանի եւ Արցախի բարեկեցության՝ ԼՂՀ- ն աշխարհին ներկայացնելու համար: Արվեստաբան Էմանվել Մանուկյանը «Ֆրիտյոֆ Նանսենի բեւեռները» հոդվածում կինոռեժիսոր Սերգեյ Միհայելյանի «Ընդամենը մեկ կյանք» ֆիլմը դարձնելով բանալի՝ «Armenian Genocide1915» խորագրի ներքո ներկայացնում է մեր ժողովրդի մեծ բարեկամ, հումանիստ բեւեռախույզ Նանսենին, ով մի առիթով ասել է.

- Կարեկցում եմ հայ ժողովրդին, որ խճճվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբեւէ հնչած չլիներ Եվրոպայի որեւէ քաղաքագետի բերանից: Նրանք մասը մասին չխփեցին իրենց խոստումները կատարելու համար, քանի որ դրանք տվել էին թեեւ փոքր, արնքամ, սակայն շնորհալի մի ժողովրդի, որը չուներ նավթի եւ ոսկու հանքեր»:

Կինոգետ Վադիմ Ղարիբյանը իր հոդվածով անդրադարձել է տաղանդաշատ արտիստ Վլադիմիր Քոչարյանին, որի կյանքը ողբերգական վախճան ունեցավ 1989 թվականին, իր ուժերի ծաղկման ընթացքում՝ երբ նա ընդամենը 39 տարեկան էր: Նրա կինը՝ դերասանուհի Կարինե Սուքիասյանը, եւ որդին՝ ռեժիսոր Հայկ Քոչարյանը Նյու Յորքում ներկայումս շարունակում են Վլադիմիրի անավարտ թողած գործը: Վադիմ Ղարիբյանը մեկ այլ՝ «Զինուժը 20 տարեկան է» հոդվածով անդրադառնում է ՀՀ պաշտպանության նախարարության լրատվական ծառայության ակունքներին եւ հետագա գործունեությանը: «Ֆիլմ թերթի էջերից» մշտական խորագրի ներքո հրապարակված է «Հանիրավի մոռացության տրված Հենրի Ալավերդյանը», 27 տարի առաջ Հրաչուհի Տատուրյանի վարած մտերմիկ հարցազրույցը, որը բացահայտում է Հայաստանի ժողովրդական արտիստ , օպերային երգիչ եւ կինոդերասան Հենրի Ալավերդյանի հարուստ ու հումորով լի ներաշխարհը: «Անձնական արխիվներից» վերտառությամբ հրապարակել ենք հայկինոյի հիմնադիր Համո Բեկնազարյանի նամակն ուղղված ռեժիսոր Արշավիր Սամվելյանին, որտեղ մասնավորապես ասվում է.

- Արվեստը վրեժխնդիր է...Պետք չէ անպայման գլուխգործոց նկարելու նպատակ հետապնդել եւ գերազանցել բոլոր ռեժիսորներին: Նորարարությունը լավ բան է, եթե մեծ փորձ ունեք: Եվ շատ մի հրապուրվեք կինոխցիկի շարժումներով: Շարժումը պետք է բխի կոմպոզիցիայի ներքին տրամաբանությունից,- գրում է Բեկնազարյանը:

1960 թվականին Կիեւում, իսկ 1961 թվականին Մոսկվայում հայ կինոգործիչները հանդիպում են ունեցել Վիլյամ Սարոյանի եւ բեմադրիչ Ռուբեն Մամուլյանի հետ: Պարբերականում հրապարակված երկու արժեքավոր լուսանկար-ինֆորմացիան պատմում է այդ մասին:

Մատենադարանի արվեստի պատմության բաժնի վարիչ Կարեն Մաթեւոսյանը «Վերնիսաժ» բաժնում վերլուծում եւ գնահատում է նկարիչ Սեյրան Գասպարյանի աշխատանքները: «+Կինո»-ն անդրադարձել է նաեւ ֆրանսահայ ֆոտոժուռնալիստ Մաքս Սիվասլյանին, ով ճանապարհորդել է հինգ մայրցամաքներով եւ ամենուր ներկայացրել մարդկային ճակատագրեր:

Այս անգամ, նույնպես, հետաքրքրական նյութեր են տեղ գտել ամսագրի ռուսական բաժնում, որտեղ ուզում եմ առանձնացնել Հայաստանի ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, տաղանդաշատ օպերատոր Ալբերտ Յավուրյանի հետ Աննա Քրիստաֆորյանի հարցազրույցը:

Հարկ է նշել, որ «+Կինոն» շուտով հասու կլինի նաեւ համացանցում: Ամսագրի էլեկտրոնային տարբերակը լավ նվեր կլինի արվեստասեր ընթերցողներին: Իսկ առայժմ ամսագիրը կարելի է ձեռք բերել հանրապետության մամուլի կրպակներում:

ՍԱԹԵՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ

# Սլավիկ Գալստյանն արժանացավ բրոնզե մեդալի

Սերբիայում ընթացող ըմբշամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում իրենց մրցավեճն ավարտեցին հունահռոմեական ոճի ըմբիշները: Մրցումների 2-րդ օրը Հայաստանին եւս մեկ բրոնզե մեդալ պարգեւեց մինչեւ 42 կգ քաշային կարգում գոտեմարտած Սլավիկ Գալստյանը:

Հայ ըմբիշի համար անհաջող դասավորվեց առաջին գոտեմարտը, որում նրա մրցակիցն ուկրաինացի Էմին Սաֆերշաեւն էր: Գալստյանը զիջեց մրցակցին, որը հետագայում հաջող մրցելույթներ ունեցավ եւ արժանացավ աշխարհի չեմպիոնի տիտղոսին՝ եզրափակիչում հաղթելով ղրղզ Նուրբեկ Մակսատբեկովին:

Ուկրաինացու հաջող մրցելույթների շնորհիվ հայ ըմբիշն իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Այդ պայքարը հաջողությամբ պսակվեց: Հաջորդաբար հաղթելով իրանցի Պոյա Նասերպուրին եւ բելառուս Օլեգ Ժուկովին, Գալստյանը դարձավ 3-րդ մրցանակակիր: Հիշեցնենք, որ նախորդ օրը բրոնզե մեդալ էր նվաճել մինչեւ 63 կգ քաշային Կորյուն Ամիրյանը:



Մրցանակակիր կարող էր դառնալ նաեւ մինչեւ 69 կգ քաշային Հրանտ Կալչյանը: Նա հաջորդաբար հաղթելով իտալացի Լուկա Դարիոզիին եւ ուկրաինացի Վլադիսլավ Կուլպային, կիսաեզրափակիչում պարտվեց թուրք Սերկան Ակոյունին ու ստիպված էր պայքարը շարունակել միայն բրոնզե մեդալի համար: Այդ պայքարում հայ ըմբիշն անհաջողության մատնվեց՝ պարտվելով ամերիկացի Ջոն Չավեզին:

Բրոնզե մեդալ նվաճելու հնարավորություն էր ընձեռվել նաեւ Գագիկ Սարգսյանին (76 կգ), որը եւս չկարողացավ մրցանակակիր դառնալ: Հաղթելով ճապոնացի Տակույա Յամաշիտային, իտալացի Գիակոմո Գյուֆրիդային, Գագիկը քառորդ եզրափակիչում պարտվեց ադրբեջանցի Իսլամ Աբբասովին, որն ի վերջո նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իսկ հայ ըմբիշը պայքարը շարունակեց բրոնզե մեդալի համար: Սակայն այստեղ էլ Սարգսյանն անհաջող գոտեմարտեց ու զիջեց ղրղզ Սամաթ Չոնորալիեւին:

Մինչեւ 46 կգ քաշային կարգում շատ անհաջող հանդես եկավ Էդգար Թամազյանը, որը հենց առաջին գոտեմարտում պարտվեց ուզբեկ Ջավոխիր Միրակոիմեդովին ու դուրս մնաց հետագա պայքարից: Իսկ ուզբեկ ըմբիշը դարձավ բրոնզե մեդալակիր:

# «Արսենալը» լուծեց խմբային մրցաշարի ուղեգրի հարցը

Չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի առաջին խաղում Լոնդոնի «Արսենալը» գործնականում լուծեց խմբային մրցաշարի ուղեգրի հարցը՝ Ստամբուլում 3-0 հաշվով ջախջախելով թուրքական «Ֆեներբահչեին»: Դաշտի տերերը միայն առաջին խաղակեսում քիչ թե շատ դիմադրություն ցույց տվեցին: Ընդմիջումից հետո Գիբսը, Ռեմսին եւ Ժիրուն 3 անգամ գրավեցին դաշտի տերերի դարպասը:



Գերմանական «Շալկե-04-ը» սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) խաղաց հունական ՊԱՕԿ-ի հետ: Հույները միայն խաղավարտից 17 րոպե առաջ կարողացան խուսափել պարտությունից: Անսպասելի էր Զագրեբի «Դինամոյի» սեփական հարկի տակ «Աուստրիայից» 0-2 հաշվով կրած պարտությունը: Հյուրընկալվելիս հաջող խաղաց նաեւ շվեյցարական «Բազելը»՝ 4-2 հաշվով հաղթելով բուլղարական «Լուդոգորեցին»: Չեխական «Վիկտորիան» սեփական դաշտում 3-1 հաշվով պարտության մատնեց Սլովենիայի «Մարիբորին»: Ռումինական «Ստյաուայի» եւ լեհական «Լեգիայի» հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

# Նեյմարը «Բարսելոնին» փրկեց պարտությունից

**Կայացավ Իսպանիայի Սուպերգավաթի խաղարկության առաջին հանդիպումը, որում ուժերը չափեցին Մադրիդի «Ատլետիկոն» եւ «Բարսելոնը»: Այդ խաղում մեծամասնությունը հաղթողի հավակնորդ էր համարում «Բարսելոնին», որն Իսպանիայի առաջնություններում մրցակցի հետ անցկացրած վերջին 6 հանդիպումներում էլ հաղթել էր ընդհանուր 17-5 հաշվով:**

**Խաղի նախօրեին «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Հերարդո Մարտինոն հայտարարել էր, որ Սուպերգավաթի նվաճումն իր սաների համար մեծ նշանակություն ունի: «Բարսելոնը» 10 անգամ նվաճել է Իսպանիայի Սուպերգավաթը: Անցած տարի «Բարսելոնը» 2 խաղերում էլ պարտվելով Մադրիդի «Ռեալին», պատվավոր մրցանակը զիջել էր մրցակցին, որը 9-րդ անգամ դարձավ սուպերգավաթակիր: Իսկ մինչ այդ կատալոնական ակումբը 3 տարի անընդմեջ նվաճել էր Սուպերգավաթը:**

**Մադրիդի «Ատլետիկոն» առայժմ միայն մեկ անգամ է հաղթող ճանաչվել Սուպերգավաթի խաղարկությունում՝ 1985-ին առավելության հասնելով հենց «Բարսելոնի» նկատմամբ (3-1, 1-0): Դրանից հետո թիմը 3 անգամ (1991, 1992, 1996-ին) մրցանակը զիջել էր մրցակցին:**

**Մադրիդում կայացած խաղում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: Արդեն 12-րդ րոպեին ամռանը «Բարսելոնից» «Ատլետիկո» տեղափոխված Դավիթ Վիլյան բացեց հաշիվը: «Բարսելոնին» պարտությունից փրկեց 2-րդ խաղակեսում փոխարինման մտած Նեյմարը, որը 66-րդ րոպեին վերականգնեց հավասարակշռությունը: Պատասխան հանդիպումը կկայանա օգոստոսի 28-ին Բարսելոնի «Կամպ Նոու» մարզադաշտում:**

# Քառորդ եզրափակիչի մասնակիցներից 4-ը հայտնի են

Նորվեգիայում ընթացող շախմատի աշխարհի գավաթի խաղարկությունում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի առաջին 4 մասնակիցները: Պայքարը կշարունակեն Վլադիմիր Կրամնիկը, Անտոն Կորոբովը, Ֆաբիանո Կարուանան եւ Գատա Կամսկին:

Կրամնիկը 1,5-0,5 հաշվով հաղթեց Վասիլի Իվանչուկին՝ 2-րդ պարտիան ավարտելով ոչ-ոքի: Կորոբովը նույնպիսի հաշվով առավելության հասավ Հիկարու Նակամուրայի նկատմամբ: Նա շահեց 2-րդ պարտիան: Կարուանան 2-րդ պարտիայում էլ պարտության մատնեց Խուլիո Գրանդա Զունիգային: Գատա Կամսկին ոչ-ոքի խաղալով Շահրիյար Մամեդյարովի հետ, մրցախաղը շահեց 1,5-0,5 հաշվով:

Սվիդլեր-Լե Քուանգ Լիեմ, Կարյակին-Անդրեյկին, Գելֆանդ-Վաշիե-Լագրավ եւ Տոմաշեւսկի-Մորոզեւիչ պարտիաները կրկին ավարտվեցին ոչ-ոքի, ուստի այդ զույգերի հաղթողներին որոշելու համար լրացուցիչ մրցախաղ կանցկացվի:

ՖՈՒՏԲՈԼ

# Հայկ Գալստյանը սպասում է «Ատլետիկոյի» հրավերին

**Երեւանի «Միկայի» 16-ամյա ֆուտբոլիստ Հայկ Գալստյանը հունիսի սկզբին հաջող փորձաշրջան էր անցել Մադրիդի «Ատլետիկոյի» պատանեկան թիմում՝ ընկերական հանդիպումներում խփելով 10 գնդակ: Ինչպես տեղեկացանք ակումբից, օգոստոսի 15-ին հայ ֆուտբոլիստը պետք է մեկներ Մադրիդ՝ կրկնակի փորձաշրջան անցնելու: Սակայն մինչ օրս «Ատլետիկոն» հրավեր չի ուղարկել:**

**«Միկայի» մեկ այլ ֆուտբոլիստ՝ Աշոտ Կարապետյանը փորձաշրջան էր անցնում լեհական «Վիձեւում», որի կազմում հանդես է գալիս ՀՀ հավաքականի պաշտպան Լեւոն Հայրապետյանը: Կարապետյանը վերադարձել է Երեւան եւ իր ելույթները կշարունակի «Միկայում»:**

# Գինեսի ռեկորդակրի նոր նվաճումը

**56-ամյա Բենիկ Իսրայելյանը շարունակում է զարմացնել իր յուրօրինակ նվաճումներով: Նա Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու իր 4-րդ հայտը ներկայացրեց՝ բարելավելով նախկին ցուցանիշը: Արցախցի դյուցազնը աջ ձեռքի միջնամատով բարձրացրեց 129 կգ 850 գ ծանրությունը՝ պահելով 5 վրկ 20 սմ բարձրության վրա: Այս նվաճումը գրանցվեց հայկական «Դյուցազնագրքում»: Այժմ «Դյուցազնագրքի» հանձնախումբը Վարդան Թովմասյանի գլխավորությամբ անհրաժեշտ փաստաթղթերն ու տեսանյութն է պատրաստում, որպեսզի դրանք ուղարկվեն Լոնդոն՝ Գինեսի ռեկորդների գրքում Բենիկ Իսրայելյանի հերթական նվաճումը գրանցելու համար:**



**«Հաղթանակ» զբոսայգում կազմակերպված միջոցառմանը մեծ թվով հանդիսականներ էին հետեւում: Նրանց թվում էր նաեւ ՀԱՕԿ-ի փոխնախագահ Դերենիկ Գաբրիելյանը, որը հիացած էր մնացել Բենիկ Իսրայելյանի հերթական նվաճմամբ, նշելով, որ դա իսկական հայկական ռեկորդ է:**

**Բենիկ Իսրայելյանը նախկինում զբաղվել է ծանրամարտով եւ վոլեյբոլով: Արդեն 25 տարի է, ինչ նա մասնագիտացել է մատներով տարբեր ծանրություններ բարձրացնելու գործում: Ամենօրյա մարզումները տվել են իրենց ցանկալի արդյունքը: 2011-ին նրա անունը գրանցվեց Գինեսի ռեկորդների գրքում: Այն ժամանակ Բենիկ Իսրայելյանը աջ ձեռքի միջնամատով բարձրացրել էր 116,9 կգ ծանրություն: Հետագայում Բենիկը 2 անգամ բարելավեց իր ռեկորդային ցուցանիշները, որոնք դեռեւս իրենց գրանցմանն են սպասում Գինեսի ռեկորդների գրքում:**

**Իսկ ավելի վաղ՝ 2000-ին, Իսրայելյանի անունը գրանցվել է հայկական «Դյուցազնագրքում»՝ 147,5 կգ: Հետագա տարիներին Բենիկը բարելավել է ցուցանիշը՝ հասցնելով մինչեւ 175 կգ-ի:**

# 3-րդ անընդմեջ ոչ-ոքին

Վիեննայի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Հրաչյա Հունանյանը կրկին հաշտություն կնքեց Օտտո Հերի հետ: Նա արդեն 3-րդ անընդմեջ ոչ-ոքին գրանցեց իր օգտին: Հայ շախմատիստը վաստակել է 1,5 միավոր:

Մրցաշարի միանձնյա առաջատարը գերմանացի Հագեն Պյոտչն է, որը 5-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցը Անդրեաս Բրյուհլն էր: 11 շախմատիստներ 4,5-ական միավորով հետապնդում են առաջատարին:

# Հայ ֆուտբոլիստները կմրցեն վրացիների հետ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը նախապատրաստվում է հոկտեմբերի 23-30-ը Երեւանում կայանալիք Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին: Մեր ֆուտբոլիստների մրցակիցներն են Անգլիայի, Իռլանդիայի եւ Ջիբրալթարի հավաքականները:

Ընտրական մրցաշարի նախապատրաստության շրջանակներում մեր պատանիները սեպտեմբերի 28-ին եւ 30-ին ընկերական հանդիպումներ կանցկացնեն Վրաստանի իրենց հասակակիցների հետ:

# «Զենիթն» ու «Ռեալը» հետաքրքրվում են Լեւանդովսկիով

«Իզվեստիայի» տեղեկացմամբ Լեհաստանի հավաքականի եւ Դորտմունդի «Բորուսիայի» հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկին մինչեւ տրանսֆերային պատուհանի փակվելը կարող է հայտնվել Սանկտ Պետերբուրգի «Զենիթում»: Ներկայումս ռուսական ակումբը բանակցում է Լեւանդովսկու գործակալների հետ: Վերջիններս տարեկան 7,5 մլն եվրո աշխատավարձ են պահանջել Լեւանդովսկու համար:

Լեւանդովսկու ծառայություններով հետաքրքրված է նաեւ Մադրիդի «Ռեալը»: Լեհ ֆուտբոլիստի տրանսֆերային արժեքը 39 մլն եվրո է: Սակայն «Բորուսիան» չի ցանկանում բաց թողնել իր հարձակվողին, որի պայմանագիրն ակումբի հետ ավարտվում է 2014-ին:

Լեւանդովսկին «Բորուսիայում» 1,5 մլն եվրո տարեկան աշխատավարձ էր ստանում, իսկ նոր մրցաշրջանում նրա աշխատավարձը դարձել է 5 մլն եվրո: Նա «Բորուսիա» էր տեղափոխվել 2010-ին Պոզնանի «Լեխից» 4,5 մլն եվրոյի դիմաց:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

**Օրերս տխուր լուր ստացվեց Հունաստանից. վախճանվել է հունահայ ազգային գործիչ, ազգային բարերար եւ հայի յուրահատուկ տեսակին պատկանող Կարապետ Ռուբենի Գալֆայանը: Տխրություն է պատել հոգիս. մեկառմեկ հիշում եմ պարոն Գալֆայանի հետ շուրջ տասը տարվա մեր ծանոթության բազմաթիվ եւ բազմազան մտերմիկ զրույցները, ազգային եւ Հայաստանի պետական խնդիրների վերաբերյալ մեր զրույց-մտահոգությունները, երբեմն էլ մեղմիկ վիճաբանությունները: Ամեն դեպքում էլ մեր տարաբնույթ զրույցների ավարտը հանգում էր Հայաստանի պետական ու սոցիալական դրվածքի ամրապնդման անհրաժեշտությանը, ազգային միասնականության անհրաժեշտության գաղափարին, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, որի անդավաճան մշակներից էր: Բանիմաց, ազգային մեծ ու փոքր տագնապներով եփվող-տապակվող մարդ էր Գալֆայանը: Գրեթե ամեն ինչի նկատմամբ անսահման հավաս ու հույս ուներ: Խոսքը հասու էր, կշռադատված եւ անզիջող: Ազգային բարերար էր, հռետորական ձիրքով օժտված, որի հրապարակավ ասված խոսքը գերող էր ու իմաստալից: Նաեւ համով-հոտով զրուցակից էր.**

հայ եւ հույն ընտանիքների հետ Հունաստան է ներգաղթել 1922 թ., որտեղ Գալֆայանները տասնամյակներ շարունակ զբաղվել եւ զբաղվում են ազգային, մշակութային աշխատանքներով: Գալֆայանները՝ շարունակելով իրենց գերդաստանի ավանդական-ազգային գործունեությունը, այն համալրել են շատ կարեւոր մի բնագավառով եւս՝ ազգային կիրառական արվեստի նմուշների ու մասունքների ձեռքբերմամբ (գնմամբ) հավաքածո ստեղծելու շատ կարեւոր գործով, որը 1980-ական թվականներից ի վեր շարունակվում է արդեն Կ. Գալֆայանի որդիների՝ Ռուբենի եւ Արսենի ջանքերով: Եվ այսօր, ի դեմս Գալֆայան ընտանիքի, աշխարհի աճուրդներից, անհատներից գնվել-ժողովվել է XVI-XIX դդ. հայկական կիրառական արվեստի զանազան առարկաների մի յուրօրինակ հավաքածո:

Մի քանի ժամ տեւած մեր զրույցի ընթացքում քննարկեցինք այդ հավաքածուի նյութերը ցուցահանդեսով ներկայացնելու, արձանագիր իրերը առանձին հատորով հայագիտությանը ներկայացնելու խնդիրը: Հունաստանից վերադառնալուց հետո եւ մինչ այժմ էլ շարունակվող էլեկտրոնային նամակագրու-

## Հիշատակդ անանց, Կարապետ Գալֆայան

**հիշողությանս մեջ վառ են հունահայ կյանքից նրա պատմած-նկարագրած «Հակոբլարը», «Ուրֆացին» եւ այլ իրական պատումները:**

**Իրական ազգային գործիչ եւ օրինակելի հայրենասեր Կ. Գալֆայանի անձի ու գործունեության վերաբերյալ իմ գրառումները տեղ են գտել հենց նրա ու որդիների ամբարած-ստեղծած հայոց մշակութային արժեքների հավաքածուին նվիրված իմ «Մշակութային արժեքների Գալֆայան հաւաքածուի արձանագիր իրերը» («Տիար Կարապետ Գալֆայանի կենսագրական դիմանկարը») եւ «Հայ հնատիպ գրքի մանրանկարման մի եզակի օրինակ» (2012) աշխատություններում: Բարեբախտաբար այդ երկու աշխատություններն էլ տեսավ պրն Գալֆայանը եւ գոհունակությամբ էր լցված:**

**Արդ, այս վշտալից առիթով այլ խոսք եմ ուզում շարադրել եւ ընթերցողի ուշադրությանն եմ ներկայացնում իմ «Հայ հնատիպ գրքի մանրանկարման մի եզակի օրինակ» գրքում պրն Գալֆայանի վերաբերյալ շարադրված հատվածը.**



«2004թ. հոկտեմբեր, Հունաստան: Տեղի համազգային կազմակերպության նախաձեռնությամբ ու հրավերով Թեսալոնիկում հայկական համայնքի համար բանախոսում եմ «Հայկական քրիստոնեական հուշարձանները», որը հագեցած է պատմական Հայաստանի հայկական հուշարձանների հարուստ լուսանկարների ցուցադրությամբ: Մեկ ժամից ավելի տեւած բանախոսությունից հետո եղան հարցուպատասխան եւ ոգեւորված շնորհակալական ելույթներ: Ձեռնարկի ավարտին ինձ մոտեցավ ժրաջան, հայրենասիրական զգացմունքներով ափեափ լցված, 70-ի մոտ, բարձրահասակ մի անձնավորություն: Ծանոթացանք համակրելի ու հաճելի զրուցակից Կարապետ Գալֆայանի հետ: Զրուցակիցս խնդրեց ժամանակ տրամադրել եւ ավելի հանգամանալից զրույցը շարունակել իր տանը, որը գտնվում էր հայկական եկեղեցուց ոչ այնքան հեռու:

Պարոն Գալֆայանի եւ նրա տիկնոջ՝ Անահիտի հետ զրուցելով շարժվեցինք դեպի նրանց տուն, որտեղ մտնելուց հետո այն տպավորությունն էր, ասես թանգարան էի մտել: Բարձրահարկ շենքի երեք սենյակների պատերին կախված էին հայկական ու հունական, եվրոպական արվեստի գեղանկարներ, այս ու այն կողմ դրված կամ կախված՝ XVII-XIX հայկական կիրառական արվեստի զանազան առարկաներ...

Հիացմունքիս չափ ու սահման չկար: Խոհանոցում հայացքս գամվեց պատից կախված զանազան իրերից մի քանիսի հայերեն արձանագրություններին: Վերցրի, շուռումուռ տվեցի, ընթերցեցի XVII-XVIII դդ. արձանագրությունները.... Եվ տեր ու տիկին Գալֆայանների հետ նախատեսված մեկժամյա հանդիպումս երկարաձգվեց-հասավ երեք ժամի, երբ տեղեկացա, որ իրենց հավաքածուում եղած հայկական բազմաթիվ առարկաներն ունեն հայերեն արձանագրություններ: Ինչպես ասում են, ուրախությունիցս ծնկներս թուլացել էին...

Սեղանի շուրջը, վայրկյան առ վայրկյան, ծանոթության սովորական զրույցը ինձ համար վերածվեց մի շարք բացահայտումների, մասնագիտական անկասելի հետաքրքրասիրության եւ անսքող ուրախության:

Ինձ համար պարզ դարձավ, որ Կեսարիայի Թալաս քաղաքից սերող այդ գերդաստանը բազմաթիվ

թյամբ ու հեռախոսազրույցներով քննարկել ու վերաքննարկել, ճշտել ու վերաճշտել ենք մի շարք հարցեր ու խնդիրներ, եւ... Եվ մեր համագործակցության արդյունքը եղավ այն, որ Եվրոպայում ճանաչում ունեցող Հունաստանի Բյուզանդական արվեստի թանգարանում 2010 թ. հունիսի 11-ից հոկտեմբերի 10 Հունաստանի կառավարության աջակցությամբ եւ կառավարական մակարդակով իրականացվեց այդ հավաքածուի բազմաթիվ բազմազան իրերի մեծ ցուցահանդեսը, որը հունական շրջանակներից բացի մեծ հետաքրքրություն առաջացրեց նաեւ եվրոպացի մասնագետների շրջանում:

Մինչ այդ, Բյուզանդական արվեստի թանգարանի պաշտոնական հրավերով, 2007-ին երկու ամիս տեղում մասնակցեցի ցուցահանդեսի մեջ ընդգրկված նյութերի դասդասման, թվագրման, բացատագրերի կազմման եւ հունարեն թարգմանման աշխատանքներին, վերծանելով նաեւ բոլոր հայերեն արձանագրությունները: Ամեն վայրկյան նորանոր բացահայտումներով եւ հնարավոր խորաթափանցությամբ, ամեն օր ժամը 9-16-ը լարված աշխատում էի թանգարանում, ժամը 18-ից 20-ը՝ Գալֆայանների տանը եղած իրերը ուսումնասիրելով: Թե՛ թանգարանի աշխատակիցները եւ թե՛ Գալֆայանները մի տեսակ զարմանք ու հիացմունք էին ապրում...

Գալֆայան ընտանիքի եւ Բյուզանդական արվեստի թանգարանի հետ իմ համագործակցության արդյունքում դեռեւս 2007 թ. հայերեն եւ անգլերեն հրատարակման պատրաստեցի «Մշակութային արժեքների Գալֆայան հավաքածուի արձանագիր իրերը» մեծածավալ հայերեն-անգլերեն աշխատությունը, որի լույս աշխարհ գալը, ցավոք, դրամական միջոցների բացակայությամբ պայմանավորված, հետաձգվում էր տարեցտարի (բարեբախտաբար այն լույս տեսավ 2013 թ. սկզբներին - Ա. Ա.): Իսկ ցուցահանդեսի մեծաչափ, գունազարդ եւ 228 էջանոց կատալոգի անգլերեն (ASPECTS OF ARMENIAN ART KALFAYAN COLLECTION) ու հունարեն տարբերակները, որոնց կազմման աշխատանքներում առկա է նաեւ իմ մասնակցությունը, լույս են տեսել Աթենքում 2010-ին»:

**Հիշատակդ անանց՝ Կարապետ Գալֆայան:**

**ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ**
**ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, հայագետ-նախիջեւանագետ**

***ՆՅՈՒ ՅՈՐՔ***

## ՄԱԿ-ի ԱԽ-ն «լրջորեն մտահոգված է» Սիրիայի դեպքերից

**Սիրիայում քիմիական զենքի օգտագործման նոր փաստի վերաբերյալ օգոստոսի 21-ին ընդդիմության տարածած լուրերը առիթ դարձան ՄԱԿ-ի ԱԽ արտակարգ նիստի հրավիրման համար: Ֆրանս-պրեսը հաղորդում է, որ նիստում «լուրջ մտահոգություն» է արտահայտվել Սիրիայի դեպքերի առնչությամբ:**



**ԱԽ անդամները Սիրիայի իշխանություններին եւ ընդդիմության կոչ են արել դադարեցնել կրակը, ինչպես նաեւ հնարավորություն տալ այցելելու քիմիական գրոհի ենթադրյալ վայր՝ մարդասիրական օգնություն ցույց տալու համար:**

**Դրա հետ մեկտեղ, ԱԽ-ն կատարվածի համար պատասխանատվությունը չի բարդել հակամարտ կողմերից որեւէ մեկի վրա՝ նշելով, որ նախ անհրաժեշտ է «պարզություն մտցնել» եւ անցկացնել մանրակրկիտ քննություն:**

**Օգոստոսի 21-ի առավոտյան սիրիական ընդդիմությունը տարածել էր լուրեր, թե կառավարական զորքերը քիմիական գրոհ են ձեռնարկել Դամասկոսից արեւելք՝ ապստամբներին ենթակա Գուտայի շրջանում: Ընդդիմադիրների վերջին գնահատումների համաձայն, այդ գրոհից զոհվել է ավելի քան 1300 մարդ:**

**Սիրիայի իշխանությունները հերքել էին այդ մեղադրանքը; Նրանց պաշտպանել էր ՌԴ ԱԳՆ-ն, որի ներկայացուցիչները հայտարարել էին, թե թունանյութերով լցված հրթիռն արձակվել է ապստամբների դիրքերից:**

**Օգոստոսի 18-ից Սիրիայում են ՄԱԿ-ի մի խումբ փորձագետներ, որոնք քննում են քիմիական զենքի ենթադրյալ նախորդ կիրառությունների դեպքերը:**

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Կահույքի սրահ, ընդ. մակերեսն է՝ 546.80 ք.մ եւ հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.0387 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Նոր-Գեղի, 50-րդ փողոց, թիվ 22/1: Լոտի մեկնարկային գինը՝ 93000000 ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 2%-ի չափով, որը պետք է վճարվի կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 09.09.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 10.09.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գնի իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 22.8.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: